№ 290 ԵՐԵՔՇԱԲԹԻ, 28 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ

1910

ԵՐԵՍՈՒՆՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԵՐԵՔՇԱԲԹԻ, 28 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ № 290

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Сергіевская ул., № 5.
Կամ Tiflis, Rédaction «Mschak».

Խմբագրատան տէլէֆօն № 253.

Խմբագրութիւն շաբ է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).

Ցայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով

Ցայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.

Խմբագրատան տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԳԻԾ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

ԱՌԱՋԻԿԱՑ 1911 ԹՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

(39-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 ռուբլի է, 11 ամսվանը նոյնպէս 10 ռ., 10 ամսվանը՝ 9 ռ., 9 ամսվանը՝ 8 ռ., 8 ամսվանը՝ 7 ռ., 7 և 6 ամսվանը՝ 6 ռ., 5 ամսվանը՝ 5 ռ., 4 ամսվանը՝ 4 ռ., 3 ամսվանը՝ 3 ռ., 2 ամսվանը՝ 2 ռ., 1 ամսվանը՝ 80 կ. և 20 կ. պօստի ծախք։

Ամերիկայի բաժանորդները պիտի վճարեն տարեկան 6 դօլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 32 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 ռուբլի. Թուրքիայի բաժանորդները՝ 120 ղրուշ։

Հասցէները փոխելու համար պէտք է ուղարկել նախ հին հասցէն, և մի ենոյն ժամանակ 40 կոպ. նամակադրոշմ։

Ի նկատի ունենալով, որ ուշ բաժանորդագրվելու պատճառով ստեղծվում են մի շարք տեխնիկական անյարմարութիւններ, որոնք զրկում են խմբագրութեանը հնարաւորութիւնից յունվարի 1-ից կանոնաւորապէս թերթն ուղարկել բաժանորդներին, ուստի խնդրվում է բաժանորդ գրվել ցանկացողներին վաղօրօք դիմել՝ գրելով հասցէները պարզ և ճշգրիտ։

Հին բաժանորդներից խնդրվում է կցցնել փոխադր. բլանկի վրա նախկին տպագրված հասցէն իր վրա ունեցած համարով։

Մեր հասցէն. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ». Արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ՆԵՐԿ. 18. ԱԲՕՆԸՄԵՆՏԻ ՀԱՇԻՒՆ № 8.

ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿ. ԹԱՏՐՕՆ

Երեքշաբթի, դեկտեմբերի 28-ին

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԽՈՒՄԲԸ

ԿՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԷ

Առաջին անգամ

ԱՐՄԵՆՈՒՀԻ

Դրամա 4 արար., հեղ. Շիրվանզադէի

Մասնակցում են՝ տ. տ. Աշխէն, Գուլազեան, Դուրեան-Արմէնեան, Զարէլ, Ցասմիկ, պ. պ. Ալլահվերդեան, Աւետեան, Զարիֆեան, Միրզոյեան, Ցարութիւնեան և Շահխաթունի։

Սկիզբը երեկոյեան ժամը ճիշդ 8-ին է։

Գլխ. բէժիսեօր՝ Ա. Արմէնեան

Երկուշաբթի, յունվարի 3-ին, տ. ՄԱՑՈՒՐԵԱՆԻ բենեֆիսին առաջին անգամ «ԱՆՅԱՑՏ ԿԻՆԸ» Բիսսօնի։

Դ-ր Բէան հեղինակ անդամներ՝ (Տ. Յովհաննիսեան (Լ. Բարայեան

(ա.օ.) առ. 1450.

Բագուի Նաւթարդիւնաբերողների Խորհուրդը

հրաւիրում է նրանց, որոնք կը ցանկանան ստանձնել պաշտօն՝ ա) ՕԱԲՈՒՆՉԻՒ ԲՈՒԺԱՐԱՆ ԲԺՇԿԻ (ռոճիկ 2,400 ռ. և 300 ռ. շրջագայելու համար), բ) ԲԱԼԱԽԱՆԻ ԲՈՒԺԱՐԱՆ ԿՆՈՒԱՎԱՐՈՒՀԻ (ռոճիկ 3,000 ռ., բնակարան)։ Երկու բուժարաններն էլ գտնվում են նաւթային գործարանների հրապարակում, Բագուից 12 վերստ հեռաւոր. վրա, հաղորդակցութիւնը երկաթուղիով, 20 ղոյզ շոգեշարժ գնացքներ օրական։ Սարունչիի բուժարանի բժիշկը, ազատ լինելով ճաշից յետոյ, կարող է ապրել քաղաքում։

Ցայտարարութիւնները խնդրվում է ներկայացնել մինչև յունվարի 10-ը հետևեալ հասցէով. Баку, Управленіе дѣлами Совѣта.

(ա. օ.) 1441. 2—2

ԱՄԵՆԱԼԱՒ ՄԵԴՐ

Գտնվում է բարօն ՖՕՆ-ԿՈՒՉԻՆԲԱԽԻ կաթն. մազազինում

Գոլովինսկի պրոսպեկտ, № 6.

ՍԵՓԱԿԱՆ ԿԱԼՈՒԱԾՔԻՑ

ՖՈՒՆՏԸ 30 ԿՈՊԷԿ

5 և աւելի ֆունտ գնելուց—25 կոպ. ֆունտը։

(24,28,30) (առ.) 1420. 3—2

ՊԱՀԱՆՋՎՈՒՄ ԵՆ ԱԳԷՆՏՆԵՐ

Գաւառական լրագրավաճառութիւնը վարող

ԲԻՒՐՕՅԻ համար—

ՍԱՄՏՐԷԴԻՈՒՄ, ՃԻԱԹՈՒՐԻՈՒՄ ԵՒ ԳԱՆՋԱԿՈՒՄ։

Հասցէագրել՝ ТИФЛИСЪ, Эриван. пл., д. Харазова, Э. ГОРДЕЛАДЗЕ.

(ա. օ.) առ. 1425. 3—3

Թիֆլիսի Ժողովարան

Չորեքշաբթի, դեկտեմբերի 29-ին, երեկոյեան ժամը 8½-ին

Ցօգուտ ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ և ՎԱՐԺՈՒՀԻՆԵՐԻ ՄԻՈՒԹԵԱՆ

կայանալու է՝ I ներկայացում

ԿԱՐՄԻՐ ԲՐԻԻԿ

Վօդ. 1 գործ. թարգմ. Մնակեանի

Մասնակցում են հայ բեմի դերասանուհիներից տ. տ. Զարէլ, Ցասմիկ, պ. պ. Միրզոյեան, Աւետեան և Լաքա։

II

ԳՐԱԿԱՆ-ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԵՐԵԿՈՅԹ

Երեկոյթի բաժնում, Ս. Քափանակեանը մթութեան մէջ կարտասանէ ռուսերէն՝

Ա. ԳՈՒԱԴԻ

Պօէմա Էդգար Պօ-ի.

Գրական-երաժշտական բաժնում մասնակցում են յայտնի դաշնակահար պ. Տիգրանեան, ջութակահար Վիլշաու, դերասան. տ. Մայսուրեան, պ. Արմենեան, երաժիշտ պ. Ս. Մելիքեան։ Վերջինս դեկավարութեամբ Ներսիսեան դպրոցի երգեցիկ խումբը կերգէ քառաձայն զանազան երգեր։

Տօմակները վաղօրօք կարելի է ստանալ Միութեան գրասենեակում՝ Вельяминовская № 8. երեկոյեան ժամը 5—8-ը, իսկ ներկայացման օրը ժ ողովարանում։

ՄԵԾԱՄԱՍՆՈՒԹԵԱՆ ՎԻՃԱԿԸ

Ինչ կերպ է մեր ժողովրդական մեծամասնութիւնը՝ մեր գիւղացիութիւնը վերջացնում հին տարին։

Որքա՞ն ապահով է նա։ Որքա՞ն ազատ է նա վտանգներից և աղէտներից։

Բերքը այս տարի միջակ էր, բայց տեղ-տեղ նա ստացվեց սակաւաքանակ։

Ճիշդ է, ընդհանուր առմամբ ծայրայեղ կարօտութիւն չէ արտայայտվում ընդարձակ շրջաններում, բայց նեղութիւն և կարիք զգացվում է ամենուրեք։

Գիւղացիութիւնը դեռ չէ ազատվել իր հին, չափազանց ծանր պարտքերից, նա դեռ չէ կարողացել ոտքի կանգնեցնել քայքայված տնտեսութիւնը։

Եւ քանի աւելի ժամանում ենք գարնանը, այնքան աւելի են զգացվում գիւղական կարիքները, որովհետև եղած պաշարները սկսում են հատնել և շինական ժողովուրդը ստիպված է իր տան կենդանիների կամ ուրիշ առարկաների մի մասը վաճառ հանել, որպէսզի կարողանայ իր անհրաժեշտ պիտոյքները լրացնել։

Շատ և շատ տեղերում ծանր հոգս են սկսել պատճառել ցանքսի պակասութեան երկիւղը և դաշտամշակների չափազանց բազմանալը։

Կան ամբողջ շրջաններ, որտեղ աշնանացանը կատարվել է շատ պակաս՝ դաշտամշակների երկիւղից։ Իսկ արդեօք կաջողվի՞ գարնանը ապահով ցանքս անել—այդ էլ անյայտ է։

Ձմեռը անցաւ անանձրև և չոր։ Երկիրը ջրի պաշար քիչ է ստացել։ Արդեօք ձմեռվայ երկրորդ կէսը և գարունը կը լրացնե՞ն եղած պակասը — այդ էլ անյայտ է։

Անձրևի պակասութիւնը նպաստաւոր էր դաշտամշակների համար, որովհետև նրանց բուները ազատ մնացին հեղեղներից, որոնք այնքան աղէտաբեր են նրանց համար։

Ճիշդ է, կենդանիների մի մասը, անձիւն լինելու պատճառով, գիւրութիւններ ունեցաւ շարունակելու իր կերակրվելը արօտներում. բայց արօտները ջրի պակասութեան պատճառով զուրկ կը մնան գարնանային առատ բուսականութիւնից։

Երկիւղ կայ նոյնպէս մորեխից, որը կարողացել է ձուեր դցել ընդարձակ տարածութիւնների վրա։ Սովորական են դարձել և սնկային մի շարք հիւանդութիւններ։

Եթէ պետական և հասարակական հիմնարկութիւնները չը ձեռնարկեն մաքառման միջոցների ճնաստակար ազդեցութիւնների դէմ, այն ժամանակ ծանր վիճակ կը ստեղծվի մեր երկրագործի համար և նա անկարող կը լինի գարնանը բաւականաչափ ցանքս անել և ամառը խնամել իր մշակած բոյսերը։

Մեր գիւղական ժողովուրդը ապրում է ճգնաժամային պայմաններում, հազիւ-հազ ծայրը ծայրին հասցնելով։ Ամեն բ[illegible] ապրելի հարուածների տակ է դցում, որոնք աւելի ևս ծանր են դարձնում շինականի վիճակը։

Ամեն ջանք և միջոց պէտք է գործ դրվեն թոյլ չը տալու, որ եղած որոնտեսութիւնը աւելի ևս քայքայվի, և միևնոյն ժամանակ պայմաններ ստեղծվեն անտեսական վիճակի ստիճանաբար բարւոքման։

Ա. Քալանթար

ԵՐԿՐԱՇԱՐԺԸ

Վէրնի, 25 դեկտեմբերի

Բոլոր շինութիւնները փլած են, կաւապատ շէնքերը քանդված են, քարէ շինութիւնները ճեղքվածներ են ստացել, մասամբ պատերը քանդվել են, փայտէ շէնքերի տանիքները փլվել են, տեղ-տեղ իջել են ծխնելոյզները. ներսում ընկել են պահարանները, հայելիները։ Թանութներում և դեղատներում ափսէները փշրվել են. բոլոր եկեղեցիներում խաչերը կորտրվել են կամ պոկվել։ Մօտ 700 ընտանիք մնացել են անապրուստ։ Վառարանների ինն տասերորդ մասը չէ կարելի վառել։ Սառնամանիքը գիշերով 10 աստիճան է։ Ապրուստ չունեցողներին տեղաւորել են դպրոցներում և զօրանոցներում, բայց երկրաշարժի երկիւղից գիշերներն անցնում են դրսում։ Շերջակայքում երևացել են շատ ճեղքուածներ, տեղ-տեղ հողը իջել է կամ բարձրացել։ Մի քանի տեղերում բլուրները և բարձրաւանդակները փլվել են և, կիրգիզների ասելով, տակովն են արել բազմաթիւ անասունների և մարդկանց։

Տօկմակում, Պիշպէկում, Բուլանի կիրճում և Իսիկ-Կուլի հիւսիսային ափի արևմտեան մասում տեղի ունեցած կործանումները հիմք են տալիս ենթադրելու՝ թէ երկրաշարժի կենտրօնը գտնվում է Իսիկ-Կուլի արևելեան մասում կամ մի փոքր հարաւ։ Հիւսիսային ափի վրա հեռագիրը քարուքանդ է։ (Հ. Գ.)

Զարքէնդ, 25 դեկտեմբերի

Ընդմիջումներով մի քանի ժամ երկրի թոյլ տատանումները կրկնվում են։ Վերջինը առ. ժամը 7-ին էր։ (Հ. Գ.)

Տաշկենտ, 26 դեկտեմբերի

Մի կեռապ տեղս հասաւ պօստը Ջրժեվալսկիից։ Առանձին փաստեր այնտեղ չը կան։ Ջրժեվալսկի ճանապարհին շատ մարդիկ մնացել են փլատակների տակ։ Վերջիններից՝ հեռագրաթիթը փչացել է 10 վերստ տարածութեան վրա։ (Հ. Գ.)

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Ցարսկոյէ-Սէլօ, 26 դեկտեմբերի

Յերեկվայ ժամը 1 և 30 րօպէին Կայսրի, Դահաժառանգի, Մեծ Իշխանուհիներ Օլգա, Տատիանա և Մարիա Նիկոլայեվնաների ներկայութեամբ պալատական մանէժում տեղի ունեցաւ Ծննդեան տօնածառ պալատական պահակախմբի զինուորների և պաշտօնեաների համար։ Եկան Պալատի մինները, Պալատի կոմենդանտը, պահակախմբի հրամանատարը և այլն։ Կայսրը շնորհաւորեց։ Յետոյ Մեծ Իշխանուհիներ Օլգա և Տատիանա բաժանեցին ընծաները։ (Հ. Գ.)

Պետերբուրգ, 25 դեկտեմբերի

Դեկտեմբերի 21-ին, կայսերական համալսարանների պրոֆեսորներին ընդունելու ժամանակ Կայսրը դիմեց պրոֆեսորներին հետևեալ խօսքերով.

«Պարոններ, ես ուրախ եի ձեզ տեսնելու։ Ես ցանկացայ ընդունել ձեզ, որպէսզի աջակցեմ ձեզ եւ ձեր գործունեութեան։ Ես գիտեմ, որ այդ գործունեութիւնը դժուար է, սակայն շարունակեցէք աշխատութեամբ ինչպէս մինչեւ այժմ եղել է։ Եռանդով եւ արիութեամբ ծառայեցէք գիտութեան, հայրենիքին եւ Ինձ։ Օգնեցէք նրանց, ով ուզում է համալսարանում ուսանել։ Ես հաւատացած եմ, որ նրանց թիւը կանի։ Հաղորդեցէք ձեր ընկերներին իմ ասածները։ Մնամ բարով, պարոններ։ Յանկանում եմ ձեզ բաղդաւորութեամբ հանդիպիլ Նոր-Տարուն»։ (Հ. Գ.)

Պետերբուրգ, 26 հոկտեմբերի

Բացվեց էքսպերիմենտալ մանկավարժութեան առաջին համառուսական համագումարը։ Եկել են ուսումնական համագումարը։ Եկել են ուսումնական կազմակերպութիւնների և լուսաւորչական ընկերութիւնների ներկայացուցիչներ, որոնց թւում էքսպերիմենտալ մանկավարժութեան գերմանական ընկերութեան փոխ-նախագահ Զօմմեր, Կէյկէֆ, Լայպցիգի հոգեբանական ինստիտուտի կողմից Մարգարեան և ուրիշները, բոլգարական լուսաւորութեան մինիստրութեան և ուսուցչական ընկերութեան պատգամաւորները։ Նախագահ ընտրվեց Մոսկվայի համալսարանի պրիվատ-դոցենտ Իգնատիէվ, առաջին նիստի պատուաւոր նախագահ՝ Զօմմերը։ Վերջինս, շնորհակալութիւն յայտնելով ընտրութեան համար, զարմանք յայտնեց, որ Ռուսաստանում գործը այդչափ զարգացել է, մինչդեռ արտասահմանում հազիւ բողբոջներ է ձգել։ (Հ. Գ.)

«Баку»-ի Թիֆլիսի թղթակիցը հեռագրում է. «Հայ հոգևորականութեան և ինտելիգենցիայի մասնաւոր խորհրդակցութեան մէջ կաթողիկոսական թեկնածու առաջարկվեց Կաթողիկոսի դիւանապետ Բագր. վ. Վարդապետեան՝ 40 տարեկան, բարձրագոյն իրաւաբանական կրթութեամբ, տեղեակ Ռուսաստանին և Պարսկաստանին»։

Պետերբուրգի գերմանական «Herald» օրաթերթը տպագրել է Մատթէոս II-ի մանրամասն կենսագրութիւնը։

Նոր-Բուխարա, 26 դեկտեմբերի

Կայսրը բաղդաւորեցրեց Նոր Էմիրին մի հեռագրով, որով շնորհվում է բարձրութեան տիտղոս և շնորհաւորում է Բուխարայի դեկը ձեռքն առնելու համար։ (Հ. Գ.)

Նոր-Բուխարա, 25 դեկտեմբերի

— Տեղի ունեցաւ Նոր Էմիր Ալիմ-խանի թագադրութեան հանդէսը ոգևորված ժողովրդի ներկայութեամբ։

Ամեն ինչ հանգիստ է։ (Հ. Գ.)

Հէլսինգֆօրս, 26 դեկտեմբերի

Ընտրութիւնների վերջնական հետևանքը Հէլսինգֆօրսում. շվէդներ՝ 15,355, սոցիալ-դեմօկրատներ՝ 12,412, հին ֆիններ՝ 5994, երիտասարդ ֆիններ՝ 1922. ամբողջ երկրում առ այժմ սոցիալ-դեմօկրատները ստացել են 95,083, հին ֆինները՝ 61,608, երիտասարդ ֆինները՝ 35,110, շվէդները՝ 29,311, ագրարները՝ 11,423, քրիստոնէական բանւորները՝ 6104։

Գեն.-նահանգապետը մատնանշեց սենատին՝ թէ անհրաժեշտ է վերակազմել Ռուսաստանի պատմութեան և աշխարհագրութեան դասաւանդութիւնը միջնակարգ դպրոցներում—Ռուսաստանի անցեալի և ներկայի աւելի մանրամասն ուսումնասիրութեան, յարգանքի հպատակութեան և հաւատարմութեան զգացմունքներ զարթեցնելու համար։ (Հ. Գ.)

Պարիզ, 25 դեկտեմբերի

Դիւշանելը շատ պատգամաւորների ցանկութեամբ համաձայնեց իր թեկնածութիւնը դնել պալատի նախագահի պաշտօնի համար։ (Հ. Գ.)

Մադրիդ, 26 դեկտեմբերի

Պաշտօնապէս հաղորդվում է, որ թագաւորը Մալագայի նահանգապետի պալատը գալուց յետոյ, լսվեց կրակոց ընկած ատրճանակից, որ թեթև իրաբանցում առաջ բերեց։ Երկու հոգի վիրաւորված են։ ((Հ. Գ.)

Մելիլիա, 26 դեկտեմբերի

Եկաւ սպանական թագաւորը։ (Հ. Գ.)

Մոնակօ, 26 դեկտեմբերի

Այսօր հանդիսաւորութեամբ հրատարակվեց և այժ ստացաւ իշխան Ալբերտի շնորհած սահմանադրութիւնը։ (Հ. Գ.)

Բուխարեստ, 25 դեկտեմբերի

Բրատիանօի լիբերալ կաբինէտը հրապահանողականների պարագլուխ Կարցը։ (Հ. Գ.)

Բէլգրադ, 26 դեկտեմբերի

«ПОЛИТИКА» լրագրում հրատարակված են աւստրիահպատակ Բիւխելէի յայտարարութիւնները իր դերի մասին Վասիչի գործի նման մի գործում։ Բիւխելէն ասում է, որ Զեմլինի աւստրիական ոստիկանութեան պետը պարհանջեց, որպէսզի Բիւխելէն գրաւոր կերպով վկայէ՝ թէ Գէօրգի գահաժառանգը 5000 ֆրանկ է տալիս Զերնոգորցի Միլօշ և Տօվիչինոնրա համար, որպէսզի վերջինս սպանէ աւստրիական կայսրին, իսկ Պաշիչը Զագրեբում խմբագիր Պրիբիչեվիչին տուեց 50,000 ֆրանկ Խօրվատիայում ապըստամբութիւն պատրաստելու համար։ Բիւխելէին ուղարկեցին Բէլգրադ արքայան Գէօրգիի արխիվները գողանալու նպատակով, սակայն նա կասկած յարուցեց և աքսորվեց։ (Հ. Գ.)

Պէկին, 26 դեկտեմբերի

Սահմանադրական պալատը, փոխելով իր նախկին վճիռը, ներկայացրեց երկրորդ զեկուցում, որի մէջ մասնաւորապէս նշում է, թէ գերագոյն խորհրդի անդամները՝ օգտվելով անպատասխանատուութիւնից՝ արհամարհում են իրենց պարտականութիւնները, սառնասիրտ են դէպի պետութեան խնդիրները և ժողովրդի կարիքները, ղեկավարվելով անձնական նպատակներով, չեն արդարացնում բարձրագոյն վստահութիւնը, և ուստի անհրաժեշտ է պատասխանատու կաբինէտ. առ այժմ հարկաւոր է պատասխանատու համարել գերագոյն խորհրդին։ Զինական ժամանակը հնարաւորութիւն չէ տալիս պալատի զեկուցագրին։

Պէկինում հիմնվեց չին-ամերիկական կլուբ փոխադարձ մերձեցման նպատակով։ Կլուբի անդամներ կարող են լինել ամերիկացիներ և չինացիներ, որոնք կուսանեն Ամերիկայում։ Պատուաւոր նախագահներն են ամերիկական դեսպանը և չինական ճանապարհների հաղորդակցութեան մինիստրը Տանչաուն։ (Հ. Գ.)

Լեհ ազգը տօնում է իր լրագրութեան 250-ամեակը։ Ներկայումս լեհ երկիրներում, Ռուսաստան, Աւստրիա և

Գերմանիա, հրատարակվում են մոտ 600 պարբերական հանդէսներ, որոնցից միայն Վարշավայում 138 հատ։ Ամենահին օրաթերթն է «Վարշավսկայա Գազետան», որ հիմնվել է 1774 թ.-ին, ուրեմն մտնում է իր հրատարակութեան 137-րդ տարին, և «Վարշավսկի Կուրիէրը», որ հրատարակվում է ահա 90-րդ տարին։

Յօբելեանի առիթով լեհ լրագիրները առաջարկում են կազմել մամուլի գործիչների համագումար և տպագրական գործի ցուցահանդէս և առաջին լեհ խմբագիր Ալէքսանդր Գօրչինի յիշատակին բանալ լրագրողների համար դասընթացք։

—

Բուխարեստից «Рус. Вѣд.» լրագրին հեռագրում են, որ նահանգի ազնուականների ժողովում յարգել են Լէ վ Տօլստոյի և Ամենայն Հայոց Կաթողիկոսի յիշատակները՝ ոտքի կանգնելով։

—

Մոսկվայում «Художественный Театръ»-ում, դեկտեմբերի 22-ին երեկոյթ է տրվել բացառապէս հանդուցեալ Ն. Լ. Տարասովի յիշատակին նուիրված։ Երեկոյթում կարդացվել են հանդուցեալի բանաստեղծութիւններից մի քանիսները, որոնցից մէկը թարգմանութիւն հայերէնից։

—

Մահվան պատժի դատապարտված Պարիկի բանտարկան սինդիկատի քարտուղար Դիւնանը, որի պատճառով Ֆրանսիայի բանտարկան շրջանները ահագին բողոքներ տուին, այժմ, ինչպէս հաղորդում են լրագիրները, ներում է ստացել։

ԹԻՒՐԻՆ ԵՒ ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

—

«Рѣчь»-ի սեփական թղթակիցը հեռագրում է Կ. Պոլսից.

«Գնդապետ Նիազի-Բէյը, որ 1908 թ.-ի յունիսին իր զօրախմբով առաջինը պարզեց ազատութեան դրօշը Աբդուլ-Համիդի ըէժիմի դէմ, թողնում է իր պաշտօնը։ Կառավարութիւնը մտադիր է կենսաթոշակ նշանակել նրան, ամսական մոտ 250 ռուբլի։ Նորոգ հանդուցեալ Կաթողիկոս Մատթէոս II-ի հոգեհանգիստին ներկայ էին գրեթէ բոլոր թիւրքաց մինիստրները»։

—

Ուրմիա, 26 դեկտեմբերի

Խոյից հաղորդում են, որ ֆէդայիները դարանից կրակել են կառքով անցնող հիւպատոսի վրա։ Վերջինիս պահանջով նրանք ձերբակալված են։ Ազգաբնակութիւնը դժգոհ է բոլորի ձերբակալութիւնից։ (Հ. Գ.)

—

Կ. Պոլսում, «Рѣчь»-ի ասելով, եկող մայիսին բացվելու է Թիւրք Նկարիչների ապատութեամբ ենք հաղորդում ռուս լրագրի այս լուրը, քանի որ Թիւրք կառավարութիւնը, որ այնքան զգուշանում է կրօնական զգացմունքներ շօշափելուց, հաղիւ թէ թոյլատրէ հակա-իսլամական ցուցահանդէսը, քանի որ շարիաթը առհասարակ արգելում է գեղարուեստով զբաղվելը։

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏՆԵՐ ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ ՄԱՅՐԱՔԱՂԱՔՆԵՐՈՒՄ

—

„Петербург. Газета“ լրագիրը դեկտեմբերի 20-ից գրում է. «Երէկ Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոս Մատթէոս II-ի ամիսը էջմիածնում հողին յանձնելու օրը, Պետերբուրգի հայոց ս. Կատարինէ եկեղեցում կատարվեց հոգեհանգիստ։ Պատարագը և հոգեհանգիստը կատարեց աւագ քահ. Տէր-Գրիգորեանը եկեղեցական ամբողջ կազմով։ Պատարագին հաւաքվել էին մայրաքաղաքի բոլոր հայերը»։

—

„Рус. Вѣд.“ գրում է. «Կիրակի, դեկտեմբերի 19-ին, Ամենայն Հայոց Կաթողիկոս Մատթէոս II Իզմիրլեանի ամիսը հողին յանձնելու օրը, Մոսկվայի Խաչվերաց հայկական եկեղեցում պատարագից յետոյ կատարվեց հանդիսաւոր հոգեհանգիստ։ Հոգեհանգստից առաջ Էմ. քահ. Նազարեանցը մի ճառ խօսեց հանդուցեալի յիշատակին նուիրված։ Նրանից յետոյ խօսեց սարկաւագ Սիմէոնեանը, որ ընդարձակ իզմիրլեանին իբրև եկեղեցու պետի և ազգային գործչի։ Եկեղեցին լի էր մոսկվաբնակ հայ գաղութի ներկայացուցիչներով. կային բաւականաչափ ուսանողներ։ Տեղական հայ գաղութից ուղարկվեց հեռագիր տեղակալի անունով էջմիածին, որով հայ գաղութը իր ցաւն է յայտնում անփոխարինելի կորուստի առիթով, կորուստ, որ ունեցաւ եկեղեցին և ազգը։ Կաթողիկոսի յիշատակին եկեղեցական խորհուրդը Սարեկալովի ժողովրդական ճաշարանում բաց թողեց աղքատներին 100 բաժին ճաշ»։

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՄԱՀՎԱՆ ՇՈՒՐՋԸ

—

Թաւրիզ, 19 դեկտեմբերի

Ամսիս 12-ին մասնաւոր և տեղապահ Գէորգ արքեպիսկոպոս Սուրէնեանի կողմից ուղարկված բօթաբեր հեռագիրները գուժեցին ազգընտիր Հայրապետ Իզմիրլեանի անակնկալ և խիստ ցաւալի մահը։ Վեհի անդարմանելի կորուստը՝ որպէս համատարած հայ ժողովրդի նոյնպէս ամբողջ պարսկահայերին խորը վիշտ պատճառեց։

Բօթաբերը լուրը ստացվելուն պէս Ատրպատականի առաջնորդական փոխանորդ Կարապետ քահանան թեժական պատգամաւորական ժողովի արտակարգ նիստ գումարեց հարկաւոր կարգադրութիւններն անելու համար։ Մինչև այս առաւօտ, Կաթողիկոսի թաղման օրը, ամեն երեկոյ երկու թաղի եկեղեցիներում կատարվեցին ամբիծք։ Հանդուցեալ Վեհի յիշատակն յարգելու նպատակով երկթաղի ծխական և կենտր. ուսումնարանները մի օր փակ մնացին։ Ս. Էջմիածնում հանդուցեալի թաղման ներկայ լինելու համար պատգամաւորական ժողովում ընտրվեցին 3 պատգամաւոր և իսկոյն մեկնեցին դէպի Մայր Աթոռ։ Ժողովի որոշմամբ բոլոր գաւառներին հեռագրով ծանուցվեց տխուր կորուստը և հրահանգվեց արժանաւոր արարողութիւնների կատարման մասին։ Առաջնորդարանի կողմից տպագրվեց ու բաժանվեց հայերէն և ֆրանսերէն լեզուներով «Մահագրի» հայ հասարակութեան, կառավարական և դիւանագիտական օտար մարմիններին, ցաւօք սրտի ծանուցանելով Ամենայն Հայոց Կաթողիկոսի ցաւալի մահը և միանգամայն դեկտ. 19 ի առաւօտեան՝ հանդիսաւոր պատարագից յետոյ, տեղի ունենալիք հոգեհանգստի արարողութիւնը, որ բազմաթիւ երկսեռ հասարակութեան ներկայութեամբ կատարվեց այսօր Բերդաթաղի ս. Աստուածածնի եկեղեցում։

[illegible] արարողութեան ներկայ էին գեներալ նահանգապետ Մուխրիր-ուս-Սալթանէն իր սվիտայով, ռուսաց գեներալ հիւպատոս Միւլլէր իր պաշտօնեաներով, օսմանեան գեներալ հիւպատոս Էնվէր-բէյ, անգլիական և ամերիկեան հիւպատոսները և ֆրանսիական փոխ-հիւպատոսը։ Ներկայ էին նաև կաթոլիկ միսիայի վարդապետները և ժողովրդի հոծ բազմութիւն։ Բացակայ էին միայն ամերիկեան միսիայի անդամները՝ Նոր-Տարվայ պատճառով։

Հոգեհանգստեան միջոցին առաջնորդական փոխանորդ Կարապետ քահանան խօսեց համառօտ, բայց ազդու դամբանական, որով՝ հանդուցեալ Վեհի ամփոփ կենսագրութիւնից յետոյ, շեշտեց նրա ընտանեաց առանձնայատուկ կողմերը և բացատրեց այն հսկայ կորուստը, որ կրեց այս բօսէիս ընդհանուր հայ ազգը յանձին Մատթէոս II Կաթողիկոսի։

Հոգեհանգստից յետոյ օտար և կառավարական բարձրաստիճան հանդիսականները բարձրացան առաջնորդարան և փոխանորդին յայտնեցին իրանց սրտագին ցաւակցութիւնը։ Հիւրերը առաջնորդարանում վայելեցին պատշաճ մեծարանք և հեռացան

շուրջը կատարվածի մասին, բայց այդ չաջողվեց ինձ.—ուսանողի աշխատանքը մեծ է, ժամանակը սուղ և ժամերն արագոռս։

Սակայն բոլորովին լռելն էլ անկարելի է։ Թէև արդէն բաւական ուշ, ի հարկէ, տպաւորութիւնների թարմութեան նկատմամբ միայն, որովհետև Լ. Տօլստոյի մասին երբ էլ խօսվի, երբ էլ գրվի, երբէք ուշ չի լինի, օգտվում եմ տօնական օրերի ազատ միջոցից՝ գրի առնելու այն վերաբերմունքը, որ ցոյց տուեց ժողովուրդը ժամանակակից ինքնօրինակ մեծութիւններից մէկին—Լ. Տօլստոյին։

Հեռագրական առաջին լուրը, որ հաղորդում էր Լ. Տօլստոյի ծածուկ փախուստը դէպի անապատ, ահագին խորհրդածութիւնների նիւթ և բազմապիսի բացատրութիւնների տեղիք տուեց յատկապէս ռուսաստանցի ուսանողներին, ռուս թէ լեհ, հայ թէ վրացի, միևնոյնն է. այդ հարցով անմիջապէս հետաքրքրվողները վերջիններս պիտի լինէին ընկանաբար, որոնք, ի դէպ, ժընէվի ամբողջ ուսանողութեան բացարձակ մեծամասնութիւնն են կազմում։

Երկու օր յետոյ հեռագիրը գուժեց Լ. Տօլստոյի մահը իր փախստեան կիսաճամբին։ Այս լուրը մի այնպիսի խլրտում առաջ բերեց նոյն ուսանողութեան մէջ, այնպիսի իրարանցում, որպիսին խիստ հազուագիւտ դէպքերում է պատահում առհասարակ։ Ափսոսանքից չէր այդ իրարանցումը, ոչ էլ ցաւից ու վշտից. այլ, ինչ որ անսպասելիութիւնից, որ Տօլստոներն էլ են ենթարկվում բնական անխուսափելի օրէնքներին. մի անբացատրելի, խորհրդաւոր էքստազի մէջ էին ընկել ռուսաստանցի ուսանողները և, ըստ երևոյթին, միայն նրանք։

Մի քանի օր շարունակ մի կողմից տեղացի և առհասարակ եւրօպացի ուսանողների և միւս կողմից ժընէվի հասարակութեան ցոյց տուած անտարբերութիւնը դէպի այս մեծ մարդու մահը, որքան էլ որ հասկանալի լինէր, որովհետև ինչպէս ժընէվացիք, այնպէս և ամբողջ շվեյցարացիք իրանք ընդհանուր առմամբ և ի հարկէ համեմատաբար երջանիկ, ուրիշների կեանքով հետաքրքրվելու ամենևին սովոր չեն, այնու ամենայնիւ մարդու մտորման մէջ էր գցում, թէ հնարաւոր է արդեօք ներկայ դէպքում այս դատապարտելի անտարբերութիւնը մի քաղաքի կողմից, որ Եւրօպայի գիտութեան կենտրոններից մէկն է եղել և այսօր էլ դեռ շարունակում է լինել։

Այդէս չէր, սակայն, իրողութիւնը։ Խուլ պիտի լինէր ժընէվը, որ չը լսէր այդ համաշխարհային բօթաբեր զօղանջը։ Շատերին սկզբում անհաւատալի այդ լուրը, մանաւանդ որ մի անգամ էլ նա պաշտօնապէս հերքվեց, վերջնականապէս ճշդվելուց և հաստատվելուց յետոյ, մի նոր յուզմունք սկսվեց քաքաքում, իսկական և ընդհանուր յուզմունք։ Լրագիրներն ամբողջովին զբաղվեցին Տօլստոյով. գրավաճառները ի ցոյց հանեցին հանդուցեալի այն բոլոր հեղինակութիւնները, որ ձեռքի տակ ունէին, ընագիր թէ թարգմանութիւններ։ Շատ տեղեր խանութների դռներին ու պատուհաններին փակցված էր նրա նկարը. անցորդները, մարդ թէ կին, ծեր թէ մանուկ անխտիր պարտք էին համարում կանգ առնել, խոբաղնինն դիտել այդ մտածկոտ դէմքը, կարդալ նրա խոհուն արտայայտութիւնը, խորը հոգին, ճանաչել նրան ու այնպէս շարունակել ճանապարհը։ Նկարներին կից՝ բազմաթիւ յայտարարութիւններ հրաւիրում էին ժողովրդին այս ու այն սրահը յարգելու նրա անմահ յիշատակը և բանախօսութիւններ լսելու նրա մասին։

Անկարելի էր ամենքին հասնել, ամենքին լսել. պէտք էր շտապել համալսարան, այնտեղ էր հետաքրքրութեան կենտրոնը, այնտեղ էր կատարվելու հանդուցեալի սգահանդէսը, ձեռնարկված պաշտօնապէս համալսարանի վարչութեան կողմից։

Եւ իրօք, համալսարանի ամենամեծ սրահը ծայրէ ի ծայր այնպէս էր լցվել հանդիսականներով, որ ուսանողներին այլևս տեղ չէր մնացել. շատերը սրահից դուրս՝ միջանցքումն էին տեղաւորվել, իսկ շատ-շատերը ստիպվեցին յետ դառնալ անհուն դժկամակութեամբ։

Սրահի դիմացի պատին երևում էր Լ. Տօլստոյի նկարը զարդարված թարմ ծաղիկներով և շրջապատած սուգի սև քողով։ Ամբողջ մարդկութեան թշուառութեամբ ապրած, նրա ցաւերով ծանրաբեռնված ու խոնարհած այդ գլուխը իր դէմքի խոհուն, թախծոտ արտայայտութեամբ այնքան խորհրդաւոր ու ազդեցիկ էր, որ բոլոր հանդիսականների հայեացքները մի աչք դարձված իր վրա էր կենտրոնացրել ամբողջ սգահանդէսի ընթացքում։

Ընդհանուր ծանր ու խեղդող լռութեան մէջ ռուսաստանցի ուսանողներից կազմված երգեցիկ խումբը սկիզբ տուեց սգահանդէսին, քառաձայն երգելով մելամաղձոտ «Ցաւերդ յիշատակը»։ Հանդիսականները, խորին յարգանքով լցված դէպի հանգուցեալը, ոտքի կանգնեցին։ Մեծամասնութեան ականջներին օտար, սակայն այդպիսի մօտիկում ամենքին հասկանալի այդ երգը աւելի ևս խորացրեց ընդհանուրի առանց այն էլ ճնշված տրամադրութիւնը։

Երեք բանախօսութիւններ եղան այնուհետև։ Պատգամաւորական ժողովի անդամների կողմից նախօրօք հոգացողութիւնն էր կատարվել առաջնորդարանում, ի գոհունակութիւն օտար անձնաւորութեանց։ Հայկազ։

—

Մոզդոկ, 21 դեկտեմբերի

Անցեալ օրվայ նամակով յայտնեցի, որ ամսիս 12-ին, գիշ. $8^1/_2$ ժամին ստացվեց Վեհափառի ընդարձակ ժամվան գոյժը։ Հայոց եկեղեցիների զանգերը ծանր և տխուր զողանջիւններով ձայնակցում էին միմեանց։ Մոզդոկցիք կարծում էին, որ հրդեհ կը լինի կամ աւազակախմբերի յարձակում, բայց երբ մօտենում էին և ժամկոչից հարցնում, ցնցված յետ էին գնում. և այդ էլ բաւական էր, որ մի ակնթարթում ամբողջ Մոզդոկում տարածվէր և ամենքին յայտնի լինէր Կաթողիկոսի անսպասելի մահը։

Հետևեալ օրը կատարվեց առաջին հոգեհանգիստը, ներկայութեամբ ուսուցիչների և աշակերտ-աշակերտուհիների և այնուհետև իր ժամանակին մինչև կիրակի կատարվում էին հոգեհանգստեան կարգեր։

Ամսի 14-ին ս. Ստեփաննոսում հանդիսաւոր պատարագից յետոյ կատարվեց հոգեհանգիստ. ներկայ էին բոլոր հայերը, հոգաբարձական ամբողջ կազմը, ուսուցիչ, աշակերտ-աշակերտուհիները, Մոզդոկի քաղաքագլուխը և բէյական դպրոցի տեսուչը և նոյն դպրոցի հայ աշակերտները։

Պատարագի ժամանակ Գէորգ քահանան յայտնեց ժողովրդին հայ ազգին պատահած անսպասելի կսկիծը և անփոխարինելի կորուստը։

Հետևեալ օրը ընդհանուր ժողովում վրաձեցին տեղակալի անունով ցաւակցական հեռագիր ուղարկել. կազմել հանձնախումբ, գոյացած գումարով Մատթէոս Բ. կաթողիկոս Իզմիրլեանի անունով հիմնել «Փոնդ» և ձեռնտու պայմաններով մտցնել զանձարան ու նրա տոկոսով ամեն տարի օգնել նորաբաց «Հայրիկեան» գրադ.-ընթերցարանին։ Գովելի եռանդով փոքրաթիւ մարդկանցից ժողովվեց 125 ռ.։ Հանգանակութիւնը դեռևս շարունակվում է։

Կիրակի, ամսիս 19-ին ս. Աստուածածնի եկեղեցումն էր պատարագը։ Եկեղեցին լիքն էր ժողովրդով։ «Հայր մերի» ժամանակ խօսեց Խորէն քահ. Շահինեանը, նկարագրելով նորոգ հանգուցեալ Հայրապետի բարի և հեզ ընաւորութիւնը, նրա բոլոր ծրագրածների անկատար մնալը, հայոց ազգի թշուառութիւնը և այլն։ Հայր Շահինեանից յետոյ խօսեց Մ. Ասլամազեանը, որով ասաց հանդիսականներին, որ Լուսաւորչից սկսած մենք ունեցել ենք շատ անձնուէր հայրապետներ, որոնք միշտ ենթարկվել են հալածանքների և տեսակ-տեսակ նեղութիւնների առանց ուշադրու[illegible] նական խոստումներին, նոյնիսկ եղել են այնպիսիները, որոնք զոհվել են յանուն ազգութեան, ահա այդ հայրապետներից մէկն էլ այժմս հանգուցեալ Մատթէոս Բ. կաթողիկոս Իզմիրլեանն էր։ Հոգեհանգստից առաջ խօսեց Յովհաննիսեանը, պատմեց ժողովրդին Մատթէոս Բ.-ի համառօտ կենսագրութիւնը և շեշտեց նրա վարչական ընդունակութիւններից մի քանիսը, Կ. Պոլսում կատարած անձնազոհութիւնը, «Երկաթէ» անուն ժառանգելը և աքսորավայրերում բնակվելը։ Տիրացուներից մէկը ճառ կարդաց հոգեհանգստի վերջին։ Այնուհետև հանդիսաւոր հոգեհանգիստը վերջացաւ և ժողովուրդը տխուր սրտով հեռացաւ եկեղեցուց։

Վարդան Վարդանեան

—

Բօմանովսկի, 19 դեկտեմբերի

Այսօր, առաւօտեան ժամը 9-ին, սկսվեց ժամերգութիւնը և տևեց մինչև 11-ը։ Այնուհետև սկսվեց հանգուցեալ Ամենայն Հայոց Պատրիարք Կաթողիկոս Տ. Մատթէոս II-ի առաջի հոգեհանգստեան կարգը։ Ներսէս քահանայ Հերթեցեան ընդարձակ հանգուցեալ Վեհի անձի մեծութիւնը որպէս ժողովրդական մարդու և իսկական գործչի

ին սկզբում անհաւատալի այդ լուրը, մանաւանդ որ մի անգամ էլ նա պաշտօնապէս հերքվեց, վերջնականապէս ճշդվելուց և հաստատվելուց յետոյ, մի նոր յուզմունք սկսվեց քաքաքում, իսկական և ընդհանուր յուզմունք։ Լրագիրներն ամբողջովին զբաղվեցին Տօլստոյով. գրավաճառները ի ցոյց հանեցին հանդուցեալի այն բոլոր հեղինակութիւնները, որ ձեռքի տակ ունէին, ընագիր թէ թարգմանութիւններ։ Շատ տեղեր խանութների դռներին ու պատուհաններին փակցված էր նրա նկարը. անցորդները, մարդ թէ կին, ծեր թէ մանուկ անխտիր պարտք էին համարում կանգ առնել, խոբաղնինն դիտել այդ մտածկոտ դէմքը, կարդալ նրա խոհուն արտայայտութիւնը, խորը հոգին, ճանաչել նրան ու այնպէս շարունակել ճանապարհը։ Նկարներին կից՝ բազմաթիւ յայտարարութիւններ հրաւիրում էին ժողովրդին այս ու այն սրահը յարգելու նրա անմահ յիշատակը և բանախօսութիւններ լսելու նրա մասին։

Անկարելի էր ամենքին հասնել, ամենքին լսել. պէտք էր շտապել համալսարան, այնտեղ էր հետաքրքրութեան կենտրոնը, այնտեղ էր կատարվելու հանդուցեալի սգահանդէսը, ձեռնարկված պաշտօնապէս համալսարանի վարչութեան կողմից։

Եւ իրօք, համալսարանի ամենամեծ սրահը ծայրէ ի ծայր այնպէս էր լցվել հանդիսականներով, որ ուսանողներին այլևս տեղ չէր մնացել. շատերը սրահից դուրս՝ միջանցքումն էին տեղաւորվել, իսկ շատ-շատերը ստիպվեցին յետ դառնալ անհուն դժկամակութեամբ։

Սրահի դիմացի պատին երևում էր Լ. Տօլստոյի նկարը զարդարված թարմ ծաղիկներով և շրջապատած սուգի սև քողով։ Ամբողջ մարդկութեան թշուառութեամբ ապրած, նրա ցաւերով ծանրաբեռնված ու խոնարհած այդ գլուխը իր դէմքի խոհուն, թախծոտ արտայայտութեամբ այնքան խորհրդաւոր ու ազդեցիկ էր, որ բոլոր հանդիսականների հայեացքները մի աչք դարձված իր վրա էր կենտրոնացրել ամբողջ սգահանդէսի ընթացքում։

Ընդհանուր ծանր ու խեղդող լռութեան մէջ ռուսաստանցի ուսանողներից կազմված երգեցիկ խումբը սկիզբ տուեց սգահանդէսին, քառաձայն երգելով մելամաղձոտ «Ցաւերդ յիշատակը»։ Հանդիսականները, խորին յարգանքով լցված դէպի հանգուցեալը, ոտքի կանգնեցին։ Մեծամասնութեան ականջներին օտար, սակայն այդպիսի մօտիկում ամենքին հասկանալի այդ երգը աւելի ևս խորացրեց ընդհանուրի առանց այն էլ ճնշված տրամադրութիւնը։

Երեք բանախօսութիւններ եղան այնու-

Տեղիս «Լոյս» ընկերութեան խորհուրդը անմիջապէս նիստի հրաւիրելով իր անդամներին, որոշեց թէ ինչ ձևով յարգանք մատուցանել Վեհի յիշատակին. վճռվեց՝ ա) ամսիս 17-ին հանդիսաւոր հոգեհանգիստ կատարել տեղիս ակմբանոցի ընդարձակ դահլիճում, բ) առաջարկել հայերին այդ ժամին փակել բոլոր խանութները գ) տպագրել այս մասին թէ քաղաքիս և թէ՝ Ռոստովի թերթերում և դ) հեռագիր ուղարկել էջմիածին տեղակալի անունով, յայտնելով մեր հեռու ընկած գաղութի սրտի խոր ցաւն ու վիշտը։

Հոգեհանգստի համար հրաւիրված էր Նոր-Նախիջևանից հոգևոր կառավարութեան անդամ Պօղոս ք. Բեգելեանը, որ հոգեհանգստի ժամանակ զգացված կերպով խօսեց հանգուցեալ հայրապետի մասին՝ տեղեկութիւն տալով նրա կենսագրութեան վրա՝ կանգ առաւ նրա կեանքի նշանաւոր շրջանի՝ պատրիարքական գործունէութեան և ապա կաթողիկոսութեան և յիշելով նրա գեղեցիկ ծրագրի սկզբնաւորութեան գործադրութեան մասին, ասաց. «Ցաւի սիրտ մինչ մենք սպասում էինք էջմիածնից ուրախութեան լուրերի, լուսոյ շողերի, եռանդուն գործունէութեան շարունակութեանը հեռագիրը գուժեց արժանընտիր Գահակալի անակնկալ մահը»։ Մաղթելով հանգիստ Վեհի օրհնեալ նշխարներին, քահանան ժաղթեց Ամենակարողից հանել արժանաւոր ժառանգ էջմիածնի սգաւոր գահին։

Հոգեհանգստից՝ ժողովուրդը հոգեպէս մխիթարված, սակայն գլխիկոր և վիշտը սրտին հեռացաւ՝ համբուրելով սգակիր սեղանը, որի վրա դրված էին Հայրապետական խոյրը, եմիփորոնը, սև քողով ծածկած։

Հայ

—

Մերվ, 19 դեկտեմբերի

Ամսիս 19-ին, տեղիս հայոց եկեղեցում, Ամենայն Հայոց Կաթողիկոս Մատթէոս Իզմիրլեանի յիշատակին տեղի ունեցաւ պատարագ. հաւաքված էին երկսեռ հասարակութիւն որոնց թւում և գաւառապետը։

Ա. ք. Պապովեանը խօսեց Իզմիրլեանի կեանքից և գործունէութիւնից։ Խօսեցին նաև Ա. ք. Տէր-Ոսկանեան, առաջինը ռուսերէն լեզուով տուեց Իզմիրլեանի ընդարձակ պատկերը, իսկ երկրորդը իր մի զգացված ճառով Իզմիրլեանին ընդարձակեց, գնահատելով ուրպէս ժողովրդական գործչի գլխաւորապէս։

Մակոյկ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

—

Կ. Հ. Բ. ԸՆԿ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

Կիրակի, դեկտեմբերի 26-ին, երեկոյեան ժամը 7-ին կայացաւ Ընկերութեան անդամների ընդհանուր ժողովը։ Նիստից առաջ կատարվեց հոգեհանգիստ ի Տէր հանգուցեալ Մատթէոս Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի համար, որին ներկայ էր նաև Եփրեմ եպիսկոպոսը։

Բանալով նիստը, նախագահ բժշկ. Բ. Նաւասարդեան նորից մի քանի խօսք ասելով հանգուցեալ Կաթողիկոսի յիշատակին, առաջարկեց ոտքի կանգնելով յարգել այդ յիշատակը, որ և ժողովը կատարեց։

Ընդհանուր ժողովը կայացրեց հետևեալ որոշումները.

1) Հաստատեց կենտրոնական Խորհրդի 1911 թ. նախահաշիւը, Վերաստուգող Յանձնաժողովի առաջարկած մի քանի ձևական փոփոխութիւններով. գումարն է մոտ 34,000 ռուբլի։

2) Հաստատեց Ընկ. 23 ճիւղերի 1911 թ. նախահաշիւները. գումարն է մոտ 23,000 ռուբլի։

3) Հանդուցեալ իշխան Խօջամիրասեանի ժառանգները յանձնել են Բ. Ընկերութեան 15,000 ռ., Թիֆլիսի քաղ. Կ. Ընկ. 5% օբլիգացիաներ, որպէսզի դրա տոկոսիքով ուսում ստանան Թիֆլիսի չքաւոր հայ աշակերտներ և աշակերտուհիներ հանդուցեալի ժառանգների ընտրութեամբ։ Ընդհ.

ժողովը որոշեց ընդունել շնորհակալութեամբ և հանգուցեալի յիշատակը յարգեց ոտքի կանգնելով։

4) Կարդացվեց խորհրդի կազմած Աղքատախնամ Մասնաժողովի կանոնագրութեան ծրագիրը, որ բաղկացած էր 20 յոդուածներից, և հաստատվեց, այն պայմանով, որ 1 տարի այդպէս գործադրվի և ապա բարեփոխումներ մտցվեն կանոնագրութեան մէջ, եթէ հարկ զգացվի։

5) Որոշվեց տօնել 1911 թիւն Ընկերութեան հաստատման 30-ամեակը, հրատարակելով նրա պատմութիւնը, իսկ այլ ծանրամանութիւնները թողնելով խորհրդի հայեցողութեան։ Այս նպատակի համար ծախք յատկացվեց 1,000 ռուբլի։

Ընդհ. ժողովի վերջում դարձեալ հարց յարուցվեց հանգուցեալ Ալ. Անանեանի նամակով կտակած լրացուցիչ 10,000 ր. գումարի մասին, որ դեռևս չէ ստացվել։ Ընդհ. ժողովը որոշեց յանձնարարել խորհրդին վերստին բանակցել այս առիթով հանգուցեալի ժառանգների հետ, որոնք մէկ տարի առաջ արդէն խոստացել էին վճարել այդ գումարը։

ԶՔԱՒՈՐՆԵՐԻ ՕԳՏԻՆ

—

Տօների առիթով ստացանք՝ 1) Բժ. Յ. Գասպարեանից 10 ր., 2) Իսահակ Բէգեանի միջոցով 40 ր., որ հանգանակված է մի որոշ շրջանում հացկերոյթի ժամանակ։ Առիթից օգուտ ենք քաղում խնդրելու բարեգործ անձանց, ի նկատի ունենալ, որ բազմաթիւ չքաւորներ դիմում են մեզ շարունակ և օգնութիւն խնդրում։

ԱԹԱՆԱՍ ԺԱՄՀԱՐԵԱՆԻ ԹԱՂՈՒՄԸ

—

Այսօր 17-ին, Մոսկվայում, կարճատև, բայց ծանր հիւանդութիւնից յետոյ, կնքեց իր մահկանացուն Աթանաս Իսահակեան Ժամհարեան։

Հանգուցեալը, ինչպէս յայտնի է, Ժամհարեան տոհմի խոշոր ներկայացուցիչներից մէկն էր, ծնված Ղարաբաղի մայրաքաղաք Շուշում։ Դեռ մանուկ հասակից բերվելով Մոսկվա, նա սկսում է եռանդուն կերպով աշխատել նորաբողջ այն առևտրական հիմնարկութեան մէջ, որ այսօր յայտնի է «Եղբ. Ժամհարեանների բանկային տուն» անունով ոչ միայն ամբողջ Ռուսաստանում, այլև արտասահմանում։ Բանկային այդ տունը, որ զուտ ամերիկեան բնոյթ է կրում, ներկայումս ունի կոլոսալ կապիտալ, իսկ տարեկան շրջանառութիւնը մի քանի միլիոնի է հասնում։ Ճիշդ է, այդ տան հիմնադիրը Յովհաննէս Ժամհարեանն է, բայց չը պէտք է մոռանալ, որ հանգուցեալ Աթ. Ժամհարեան խոշոր դեր է խաղացել նրա ծաղկման և առաջխաղացման գործում. նա, անպայման, եղել է խելօք և զարգացած մարդ առևտրական կեանքում, նրա բանկային ընդունակութիւնները վաղուց գնահատվել են մայրաքաղաքի վաճառականական աշխարհի կողմից։

Այդպէս է եղել հանգուցեալը, որի շքեղ թաղումը կայացաւ այսօր, ամսիս 20-ին։

Երկսեռ ահագին հասարակութիւն էր հաւաքվել հայոց եկեղեցին։ Պատարագիչն էր Յար. ա.-Ք. Պօպովեան, իսկ երգում էր քառաձայն խումբը Եղ. Բաղասարեանի ղեկավարութեամբ։ Պատարագի վերջում Էմմ. քահ. Նազարեան մի զամբանակով դրուատեց հանգուցեալ Աթ. Ժամհարեանի կեանքն ու գործունէութիւնը, ասելով, որ եղել է իսկական հայ, յաճախ օգնել է բազմաթիւ չքաւոր ուսանողների, հիմնարկութիւնների և մասնաւոր անձանց։ Ապա շեշտելով, որ ինքը, որպէս անհատ, թէև բացասաբար է վերաբերվում կտակներին, բայց և այնպէս մեծ նշանակութիւն է տալիս նրանց։ Այս բոլորից յետոյ հայր Նազարեան յայտարարեց, որ հանգուցեալ Աթանաս Ժամհարեան կտակով թողել է երկու հարիւր յիսուն հազար (250,000) ռուբլու չափ մի խոշոր գումար՝ Կովկասում գիւղատնտեսական դպրոց բանալու համար, մի գեղեցիկ և համակրելի միտք, որ յղացել է հանգուցեալը։

«Հանգուցեալ Աթ. Ժամհարեան հայ ապրեց և հայ մեռաւ. այդպիսիները չեն մեռնում»,—վերջացրեց հայր Նազարեան իր խօսքը։

Բայց այստեղ մենք պէտք է շեշտենք այն հանգամանքը, որ հանգուցեալը իրանց բանկային տան մէջ ցոյց տուած ակտիվ մասնակցութիւնից զատ, մասնակցել է նաև շատ կրթական հաստատութիւնների և առևտրական հիմնարկութիւնների մէջ։

Այսպէս, նա մի ժամանակ Գասպարեան անկելանոցի խորհրդի նախագահ է եղել, իսկ ներկայումս նրա նախագահը հանգուցեալի եղբայրը Նիկողայոս Ժամհարեանն է։ Ապա նա եղել է «Կրթված կանանց մէջ գործնական գիտելիքներ տարածող ընկերութեան» եռանդուն անդամ-գանձապահը. իսկ այդ ընկ. կողմից դրված պակը (благодарное общество) պարզ ցոյց է տալիս, որ նա շօշափելի գործեր է արել կուլտուրական այդ հաստատութեան համար. բացի այդ, նա եղել է 2 տարի առաջ ծրնված «Ռուսաստանի ազգութիւնների մերձեցման ընկերութեան» նոյնպէս անդամ-գանձապահը, Կազան—Բեսպան երկաթուղագծի վարչութեան անդամը, Կիէվ—Վորոնէժ երկաթուղագծի ժարմի վերաստուգիչ յանձնաժողովի անդամը, և այլն և այլն...Առհասարակ պէտք է յիշել, որ հանգուցեալը փափուկ և զգայուն սրտի տէր անձն է եղել. ինչպէս Ժամհարեանները, նոյնպէս և հանգուցեալը, գրեթէ միշտ արձագանք են տուել կեանքի հասարակական երևոյթներին։ Հէնց նորերս հանգուցեալը 1,000 ր. նուիրեց Մուրօմցեվի անուան ֆոնդին. բացի այդ, նա հրատարակել է նաև մի քանի գրքեր. իսկ հանգուցեալի սպանված Իսահակ եղբայրը, ինչպէս յայտնի է, հոատարակել էր Խաչատուր Աբովեանի երկերի ժողովածուն։

Հանգուցեալի վրա դրված էին 100-ից աւելի պակներ, ընդամենը 7 կառք, որոնցից 4 հատ արծաթէ։ Պակներ դրված էին հանգուցեալի ընտանիքի, Ժամհարեանների, Ալ. Մանթաշեանի, Միք. Արաժեանցի, Իւնկերի, Բեաբուշինսկիների, զանազան բանկերի, հաստատութիւնների և հիմնարկութիւնների կողմից։ Խիստ տպաւորութիւն թողեց վրա Ժամհարեանների բանկային տան բազմաթիւ ծառայողների պակները՝ հետևեալ մակագրութեամբ. „Дорогому и любимому хозяину отъ служащихъ главной конторы“, կամ՝ „Дорогому и глубокоуважаемому хозяину отъ опечаленныхъ служащихъ Ильинскаго отдѣленія банкирскаго дома Бр. Джамгаровы“, և վերջապէս, ոչ պակաս ուշագրաւ է հետևեալ պակը. „Дорогому и доброму хозяину А. И. Джамгарову отъ мальчиковъ, швейцаровъ и дворниковъ главной конторы“.

Բայց այս բոլորից յետոյ մենք պէտք է յիշատակենք մի պակ ևս. դա հանգուցեալի ծննդավայր Շուշու ազգաբնակութեան դրած պակն է հետևեալ մակագրութեամբ. „Незабвенному гражданину Аѳанасію Исааковичу Джамгарову отъ гор. Шуши“.

Ինչպէս յայտնի է, Շուշու քաղաքային հիւանդանոցը, որ գոյութիւն ունի Յովհաննէս Ժամհարեանի անունով, բացված է Ժամհարեանների միջոցներով, որի պահպանութեան ծախքերի մի խոշոր մասը հոգում են իրանք Ժամհարեանները։ Այդ հիւանդանոցը 150,000 ռուբլու չափ մի մեծ գումար է կլանել Ժամհարեաններից։

Ի դէպ նկատենք, որ Ժամհարեանների հաշուով պահվում են որբանոցներ Մարգայում, ուսանողներ բարձրագոյն դպրոցներում. բացի այդ, 1905—6 ամ ու սարսափի տարիները նրանք մի խոշոր գումար նուիրեցին հայ ժողովրդի ինքնապաշտպանութեան գործին և կարօտեալներին։ Եւ վերջապէս, հանգուցեալ Իզմիրլիանի Մոսկվա եղած ժամանակ մի ուրիշ գումար էլ նուիրեցին վեհարանի շինութեան համար։ Նրանք յաճախ նպաստել են նաև էջմիածնի և Երուսաղէմի վանքերին և այլն և այլն...

Հանգուցեալ Աթ. Ժամհարեանի թաղման ներկայ էին երկրորդ Պետական Դումայի նախագահ Ֆ. Գոլովին, Ֆ. Կոկոշկին, գրական-հասարակական գործիչներ, զինուորականներ, առևտրական աշխարհի խոշոր ներկայացուցիչներ, շատ օտարներ և այլն։

Թաղման սգերթի առաջից գնում էին հեծեալ ոստիկանները, իսկ այնուհետև հանգուցեալի դագաղը, որ նրա ծառայողները բարձած էին իրանց ուսերի վրա, տարվեց մինչև Կուզնեցկի կամուրջը, ուր Ժամհարեանների բանկային տան առաջ, կատարվեց հակիրճ հոգեհանգիստ, որից յետոյ դագաղը դրվեց դիակառքի վրա և տարվեց գերեզմանատուն, ուր հողին յանձնվեց իր եղբօր՝ հանգուցեալ Իսահակ Ժամհարեանի շիրմի կողքին։

Այստեղ, գերեզմանատանը, գտնվում է Ժամհարեանների կառուցած քէլեխատունը։

Զը մոռանանք ասել, որ հանգուցեալ Աթ. Ժամհարեան քաջ տիրապետում էր ռուսերէն, ֆրանսերէն և գերմաներէն լեզուներին։ Իր համբավունքներով նա կաղէտ էր, որպիսի հանգամանքը բացատրվում է նաև կադետային կուսակցութեան դրած պակով։

Հանգուցեալը թողել է փոքրիկ ընտանիք, իսկ նրա բաժին կարողութիւնը հասնում է մի քանի միլիոնի։

Այս բոլորից յետոյ մնում է սպասել, որ Ժամհարեանները իրանք պաշտօնապէս յայտարարեն, թէ որպիսի տիպի գիւղատնտեսական դպրոց է լինելու հանգուցեալի թողած գումարով հիմնվող դպրոցը, և թէ, արդեօք, երբ, որտեղ պիտի հիմնվի այդ դպրոցը։

Առհասարակ ցանկալի է, որ այդպիսի մի խոշոր կտակի իրագործման պարագաները պարզվեն մամուլում իր բոլոր մանրամասնութիւններով։ Nota-Bene

Մոսկվա, 20 դեկտեմբերի

ՊԷՏՔ Է ՄԱՔՐԵԼ

—

Ասում են՝ պէտք է մաքրել։

Այո, պէտք է։

Բայց ինչպէս։

Այդ ասողը դեռ ևս չը կայ։

Ասում են պէտք է մաքրել, և նմանեցնում են Աւգիասի գոմերին։

Խօսքը էջմիածնի վանքի մասին է։

Աւգիասը Յունաստանի Ելիդա երկրի թագաւորն էր։ Այդ մարդը ունէր 3000 հատ եզն ու կով և, ուրեմն, բազմաթիւ գոմեր, որ ամբողջ 30 տարի մաքրել չէր տուել։ Այն հէրն ժամանակների թափառական ասպետ Հերքիւլէսը, երկրի երեսից ճիւաղներն ու բռնաւորները սրբելով իր պատոյտն անելիս՝ մի օր էլ գալիս է Ելիդա թագաւորն, որ այդ կիսատուածի մասին հրաշքներ էր լսել, օգտվում է նրա ներկայութիւնից և առաջարկում է նրան իր ախոռները սրբել, խոստանալով տալ նրան՝ իբրև վարձատրութիւն՝ իր եղների տասնից մին։

Կիսատուածը հաճանում է առաջարկին, և իրան վայել աջողութեամբ գլուխ է հանում գործը՝ Պենևս գետը կապելով թագաւոր Աւգիասի գոմերի մէջ։

Այդ է, բարեկամներ, համառօտ կերպով, Աւգիասի գոմերի զրոյցը։

Այժմ, ասում են, պէտք է մաքրել տալ մեր Աւգիական գոմերը։

Այո, պէտք է։

(Հարկաւ դրան հակառակ չեն իրանք գոմայիններն էլ, քանի որ չարբուածում ապրող ու շունչ քաշողն իրանք են)։

Բայց ինչպէս։

Ասում են՝ մենք սրբենք ու մաքրենք, որ գալիք Հոլուապետը յուսահատութեան չը մատնուի՝ ինչպէս իր նախորդը։

Ահա, իրաւ, մի ծանր խնդիր։

Այդ ինչպէս մեծի։

Երևի կասեն մեզ և կը բացատրեն թէ ինչ պիտի գործէ այդ մեծը և ինչպէս պիտի սրբէ գոմերը, և պատրաստէ մաքուր օթեան դալիք Հոլուապետի համար, որ գայ նստի ու չը վհատվի ու չը յուսահատվի։

Իսկ ես այնպէս եմ հասկանում, որ այդ մեծը զրոյցի Աւգիասի նմանը պիտի լինի։

Աւգիասը ինքնին մաքրել կարող չէր իր ախոռները։

Ինչու։

Կամ այն է, որ ցախաւել բռնել չը գիտէր, ոչ էլ թի բանեցնել ու քթթել. կամ այն է, որ աստուածները արգելը էին դրել վրան՝ այդպիսի գործ չը կատարել. ինքն էլ անշուշտ այնքան սրամտութիւն չէր ուզենալ Պենևս գետի ջրերը իր ախոռների մէջ կապելու։

Նա որոնեց գտաւ մի Հերքիւլէս, կամ աստուածները ուղարկեցին նրան այդ գիւղացուն։

Հերքիւլէսը կատարեց այն՝ որ Մենք-Աւգիասը այս կամ այն պատճառով կատարել չէր կարող։

Այնուհետև ինչ կը մնար անել Աւգիասին։

Տուած խօսքը պահել՝ հաւատարիմ մնալով պայմանին. խրախուսել դիւցազնին ու սիրով նրան իր հետ կապել։

Իսկ ինչ արաւ Աւգիասը։

Խօսքը չը պահեց. դրժեց տուած հաւատին։

Իսկ Հերքիւլէսը։

Նա սպանեց Աւգիասին և ուրիշին նրա տեղը դրեց թագաւոր։

Մենք նորից կը դանք այստեղ այդ խնդրին։ Ա. Մ. Եղեկեան

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԴԱՒԱՌԻՑ

—

Քիլվար, 19 դեկտեմբերի

Ամսիս 9-ին, տեղս եկաւ էջմիածնից ճեմարանի Դ. դասարանի աշակերտ Արայոս Տէր-Յակովբեանցը և ամսիս 10-ին վախճանվեց։

Արայոս Տէր-Յակովբեանը ճեմարանում ջերմախտով հիւանդանում է և տանում են նրան հիւանդանոց, ուր ամիս ու կէս մընում է։

Ճեմարանի բժիշկը չէ կարողանում օգնել, վերջը երբ տեսնում են տղան բոլորովին հալ ու մաշ եղաւ, ճեմարանի վարչութիւնը որոշում է ուղարկել հայրենիք առողջանալու։

Եւ առանց հօրը տեղեկացնելու, խեղճ տղային ուղարկում են մի բարակ ամարային վերարկուով և մի սպիտակ ամարային բլուզ հագին չորս օրվայ ճանապարհ էջմիածնից Դաղստանի սարերը։

Ճանապարհին մրսում և ջերմախի վրա աւելանում է թոքերի բորբոքում։

Յ. Յակովբեան

—

Սղնախ, 22 դեկտեմբերի

Զարգացումը մեր քաղաքում ընդունեց զարմելի չափեր։ Սպանում են մարդուն անխնայ, առանց խղճահարվելու, առանց նրա ընտանիքը ի նկատի առնելով։ Քանի քանի ընտանիքներ սեր հագան վերջին հինգ տարում։ Քանի քանի երիտասարդ ոյժեր անգութ տարճանակի զոհեր դարձան, վաղաժամ իջնելով գերեզման։ Քանի քանի ընտանիք զրկվեցին տան նեցուկից, նրից օջախները քանդվեցին։ Մարդիկ դարձել են արիւնածարաւ գազաններ և արիւնի մէջ են որոնում իրանց փրկութիւնը։ Սպանութիւններն մեր ջղերն բոլորովին բթացրել են։ Այդ ընդունում ենք նօրմալ երևոյթ։

Մօտ օրերս չարագործները ատրճանակով սպանեցին երիտասարդ վաճառական Սարգիս Կարուսմանին։ Ասում են նրանից փող են պահանջել, իսկ նա մերժել է։ Սպանութիւնը տեղի է ունեցել առաւօտեան, երբ նա տանից դուրս էր եկել խանութ գնալու համար։ Հանգուցեալն ապրել է երկու օր, ասել է, թէ ովքեր սպանեցին իրան։ Կարուսմանը համեստ վաճառական էր տասը տարի առաջ գործակատար էր. սակայն իր խելքի շնորհիւ առաջ գնաց և դարձաւ Սղնախի աչքի ընկնող վաճառական։ Սպանվածը թողեց որբեր և կնոջ։ N. N.

ՆԵՐԲԻՆ ԼՈՒՐԵՐ

—

◆ Թիֆլիսի կենտրոնական հեռագրական գրասենեակի կառավարիչը խնդրում է մեզ տեղեկացնել հասարակութեան, որ անցեալ տարիների նման, պօստ հեռագրական գըլխաւոր վարչութեան թոյլտուութեամբ, Թիֆլիսի պօստ հեռագրական հաստատութիւնների մէջ Նոր-Տարվայ առիթով բացվել է շնորհաւորական հեռագիրների ընդունելութիւն։ Այդ տեսակ հեռագիրների վրա պարտաւորապէս գրված է լինելու «շնորհաւորական» կամ «Նոր-Տարվայ», որի համար առանձին վճար չի լինի։ Շնորհաւորական հեռագիրները ուղարկվելով հերթով, յանձնվելու տեղերը կը հասցնվեն 1911 թւի յունվարի 2-ի առաւօտեան ժամը 8-ին։

◆ Լուրերին նայած, Բագուի քաղաքապետ Մարտինօվը նշանակվում է Օդեսայի քաղաքապետ, Տօլստեվի փոխարէն։

◆ Կովկ. Հ. Բ. Ընկերութեան օգտին տրվելիք երեկոյթը կայանալու է Թիֆլիսի Ժողովարանում փետրվարի 13-ին 1911 թ..

◆ Կ. Հ. Բ. Ընկերութեան խորհուրդը խնդրում է մեզ, տպել որ ինքն շնորհակալութիւնը ստացել է Խաչատուր Ղալէյչեանից 3 ր., յօգուտ աղքատների տօների առիթով։

◆ Մեզ հաղորդում են, որ Մոսկվայի խաղաղութեան ընկերութեան նախագահ իշխան Դոլգորուկով դիմել է Հ. Առաքելեանին առաջարկելով քանալ ընկերութեան կովկասեան ճիւղ։ Այս օրերս այդ առիթով կը կայանայ խորհրդակցութիւն։

◆ Թիֆլիսի ժողովրդական հմայաբանների ընկերութեան հայկական սեկցիան որոշել է գումարել առաջիկայ կիրակի, յունվարի 2-ին անդամների ընդհանուր ժողով՝ նախագծելու սեկցիայի գործունէութեան ծրագիրը առաջիկայ 1911 թ. համար։

◆ Կաթողիկոսական տեղապահ Գէորգ արքեպիսկոպոս Սուրէնեանից խմբագրութիւնս շնորհակալութեամբ ստացաւ 2 օրինակ էջմիածնի օրացոյց 1911 թ. համար։

◆ Նորերս Պետերբուրգում վախճանված Պետական Դումայի անդամ Վ. Կարաուլովի թաղման առիթով կարգադրիչները հրատարակել են մի յայտարարութիւն, ասելով թէ նրանք որոշել էին, որ հանգուցեալի գերեզմանի վրա 12 ճառախօսներ դամբանական խօսեն։ Սակայն որովհետև Պետերբուրգի քաղաքապետի օգնական գեն.-մայոր Վենդօրֆ յայտնեց, որ նա թոյլ չի տայ քաղաքական բնաւորութեամբ ճառեր, այլ միայն այնպիսիները, որոնք կը բնաւորոշեն հանգուցեալի իբրև բարեգործ, իբրև ընտանիքի հայր, իբրև մարդ, ուսմի և կարգադրիչները, որոշել են ոչ մի դամբանական չը խօսել, քանի որ անհնարին է լինելու կատարել հանգուցեալի գործունէութեան գնահատութիւնը։

◆ Այսօր երեկոյեան կը կայանայ քաղաքային դումայի նիստը, ուր, ի միջի այլոց, կը քննվի հրդեհաշէջների խումբը քաղաքին յանձնելու հարցը, և քաղաքի 1911 թւի բիւջէտը։

◆ Պետերբուրգում բացվել է մի սկանդալական գործ, «արիստոկրատիական պատանու» Իշխան Լօբանով-Ռոստովսկիի՝ իշխանուհի Լ. Ռոստովսկիի մօտ խուզարկութիւն կատարվել է որ իշխանուհին Կարմիր Խաչի ընկերութեան օգտին ունեցած իր գործունէութեան մէջ ահագին պանամա էր սարքել։ Գործի մէջ խառված են և շատ ուրիշ անձինք Պետերբուրգի բարձր հասարակութիւնից. ինչպէս հաղորդում է «Голосъ Москвы» լրագիրը։ Շատ նոր մերկացումներ են սպասվում. իշխանուհին «բարեգործական նպատակով միշտ կօնցերտներ, երեկոյթներ էր սարքում։

◆ Ստացանք Մ. Զմշկեանի 1911 թ. կազմած «Սեղանի տարեցոյցը», որի մէջ բացի աստղագիտական, օդերևոյթաբանական, բարոյագիտական, բժշկական առողջապահական, գիւղատնտեսական գիտելիքներից զետեղված են նաև այլ և այլ օգտակար տեղեկութիւններ, մանաւանդ մի յարմար և

հետև. Ռուսաստանի առաջին Պետական Դումայի անդամներից մէկը համալսարանի պրոֆէսօրներից մէկի միջոցով տեղեկացրեց հանդիսականներին Լ. Տոլստոյի կենսագրութեան և նրա ժողովրդական գործունէութեան ու մանկավարժական աշխատանքների մասին։

Գրականութեան հետևող մի ուսանող խօսեց Լ. Տոստոյի մասին ընդհանուր առմամբ, կանգ առնելով առանձնապէս նրա վայելած ահագին ժողովրդականութեան վրա ոչ միայն ամբողջ Ռուսաստանի հասարակական բոլոր խաւերի մէջ, այլ և ամբողջ Եւրոպայում ու Եւրոպայից դուրս այլ երկիրներում։

Սակայն հետաքրքրութեան արժանի էր համալսարանի գրականութեան ֆակուլտէի պրոֆէսօրներից մէկի բանախօսութիւնը ոչ թէ որպէս այդպիսի մի անձնաւորութեան կողմից եղած բանախօսութիւն, այլ որպէս մի ճշգրիտ, անաչառ ու ամփոփ անալիզ, որ ներկայացրեց հանդիսականներին յարգելի պրոֆէսօրը իր կարճատև ճառով։ Շատ լաւ ծանօթ լինելով Լ. Տոլստոյի բոլոր գրական աշխատութիւններին, նա վերլուծեց և արժանաւորապէս գնահատեց հանդուցեալի հասարակական, գրական և հրապարակախօսական գործունէութեան բոլոր կողմերը, պարզեց նրա ժամքի զարգացման ֆազերը իրանց բոլոր ելևէջներով, հիացաւ և հիացրեց ունկնդիրներին նրա կոլոսալ բօժանոցներով, որոնց մէջ, ինչպէս ընորոշեց յարգելի բանախօսը, հեղինակը ներկայացնում է ոչ միայն մի ընտանիքի, մի մասնաւոր շրջանի կամ մի հասարակութեան՝ այլ մի ամբողջ երկրի կեանքը, կենդանի, հարազատ կեանքը. նա ման է ածում իր ընթերցողին գիւղից՝ գիւղ, քաղաքից՝ քաղաք, երկրէ՝ երկիր, ծանօթացնում հասարակական բոլոր խաւերի, բոլոր տարրերի հետ—մուժիկից, զինուորից ու բանուորից սկսած՝ մինչև ազնուականը, թագաւորն ու կապիտալիստը, թափանցել է տալիս այդ ամենի հոգու խորքերը, ապրեցնում նրանց վիշտ ու ծիծաղով, մասնակից անելով նրանց կեանքի բոլոր երևոյթներին։

Իր անալիզի մէջ յարգելի բանախօսը տեղ տուեց նաև Լ. Տոլստոյի փիլիսօփայական հայեացքներին, որոնք, ըստ բանախօսի, երկար ու բարակ որոնումներ ունենալով և լայնութեամբ ու խորութեամբ ընդարձակվելով հանդերձ, ցաւօք սրտի, չը կարողացաւ մի յստակ ուղղութիւն ստանալ և փիլիսօփայական մի նոր շկոլա կազմել։

Անշուշտ, ոչ օրվայ պատշաճաւորութիւնը և ոչ էլ ժամանակը թոյլ չէին տայ աւելի երկար ու մանրամասնօրէն խօսելու. սակայն ընդունակութիւններ կան, որոնք գիտեն երկու խօսքով խիստ բովանդակալից և արժէքաւոր բան ասել, այն էլ զըսպված ձեով արտայայտված։ Այդ տեսակէտից վերին աստիճանի ուշագրաւ էին յարգելի պրոֆէսօրի հետևեալ խօսքերը, որոնք և նրա ասելիքի վերջաբանը կազմեցին. «ինչ որ ցանկանում էր Լ. Տոլստոն, ասաց նա, բարի է և գեղեցիկ, բայց... այսօրվայ համար այդպիսի միջոցով անկարելի... թէև մարդկային պատմութեան մէջ սակաւաթիւ են այն օրինակները, որոնք Լ. Տոլստոյի նման տոկուն, յամառ անընկճելի և այդքան երկար կռիւ մղած լինեն յանուն իրանց քարոզած գաղափարների իրականացման»։

Ի՜ իրօք, Լ. Տոլստոյի կեանքի վերջին օրերից սկսած մինչև այսօր ամբողջ քաղաքակիրթ աշխարհը դղրդաց նրա համար և դեռ շատ երկար կը դղրդայ։ Ամենուրեք ափսոսանքի ու կսկիծի հեղեղներ բարձրացան, էլ մարդ չը մնաց, որ չը պրպտէր նրա կեանքը, գաղափարներն ու գործունէութիւնը իրանց բոլոր կողմերով, տալով նրան մեծ մարդկանց վայել յարգանքն ու փառքը։ Ի՜նչ կասված, որ, մոմենտի ազդեցութեան տակ, շատերը չափազանցութիւնների մէջ ընկան. չէ՞ որ իզուր չեն ասել «Դնա, մեռիր, արի սիրեմ»։

Այդպէս չի վարվում սակայն ճշմարիտ, անաչառ քննադատը որևէ մէկի կամ մի երևոյթի արժանիքը գնահատելիս. բոլոր առաւելութիւնները հանդէս բերելուց յետոյ, նա չէ մոռանում յիշատակել նաև թերութիւնները, եթէ, ի հարկէ, նրանք գոյութիւն ունեն։ Եւ ահա թէ ինչ կը կարդանք, մասնաւորապէս, յարգելի պրոֆէսօրի վերջին սեղմ ու զսպված արտայայտութեան մէջ, եթէ քիչ բաց անենք, ընդարձակենք նրան։

Մեծ է, ճշմարիտ է, և անմոռանալի Լ. Տոլստոն։ Սակայն ոչնչով չի պակասի նրա մեծութիւնն ու հռչակը, եթէ խոստովանենք, որ այսօրվայ մարդկութեան ստուար մեծամասնութեան տնտեսական թշուառ վիճակը և հոգեկան անտանելի դրութիւնը, որոնց հետ այնքան հարազատ կերպով, այնքան ընդարձակօրէն և մտերիկից էր ծանօթ Լ. Տոլստոն և որոնց փրկութեան կամ գոնէ բարելաւման համար այնքան երկար, այնքան դիմացկուն ու անընկճելի կռիւ մղեց նա իր ամբողջ կեանքի ընթացքում, ոչնչով չը բարելաւվեց և չի էլ բարելաւվի այդ միջոցով։ որովհետև նրա ընտրած կռիւ եղանակը և բռնած ճանապարհը՝ հասնելու իր փայփայած նպատակին՝ հեռու էր ըէալ հող և հաստատուն բազայ ունենալուց։ Ինչ որ ճշմարիտ է, այն ճշմարիտ է. իսկ ճշմարտութիւնը բարձր է ամեն բանից։

Բացի այդ, Ինչն էր պատճառը, կարելի է աւելացնել պրոֆէսօրի մտքերի վրա, որ Լ. Տոլստոն թողեց ի վերջոյ պայքարը և հեռացաւ դէպի խաղաղ անապատ, մարդկանցից հեռու... Մթթէ յոգնութիւնը, ուժասպառ լինելը։—հազի՞ւ թէ. նրա նման մարտիկները, առհասարակ, վերջին շունչն իսկ պայքարի մէջ են առնում։

Սգահանդէսը փակվեց նոյն մելամաղձոտ երգով և հանդիսականները նոյն յարգանքը մատուցանելով մեծ մարդուն ցրվեցին խորապէս վշտացած մի այդպիսի մեծ կորստի համար, մի անգամ ևս ապացուցելով, որ յանուն մարդկութեան բարօրութեան ժղջոց կռիւ ասպարէզում իր ամբողջ կեանքում պայքարողը, ինչպիսի զէնքերով էլ որ նա կռուելու լինի, հանուր մարդկութեան անմահ, անմոռանալի ու թանգագին սեփականութիւնը և նրա պատմութեան գեղեցիկ էջերը զարդարողն է դառնում։

Իրօք, որ այդպիսիներից մէկն էր Լ. Տոլստոն. հանգիստ նրա ոսկերաց։

Ուսանող՝ Ա. Զիլինկիրեան

Ծընէվ, 13 դեկտ.

կոկ ոտանաւոր Թիֆլիսի բառաբարով, լոռոխաղի դէմ բողոքով։ Տարեցոյցի մէջ զետեղած են մեր մի քանի գործիչների պատկերները, իսկ երեսը զարդարված է անմահ Լէվ Տօլստոյի պատկերով։ Գինն է 30 կ.։

◆ Պետերբուրգի գեղարուեստից ճեմարանի խորհուրդը որոշել է 1911 թուին նպաստ տալ ի թիւս այլ հիմնարկութիւնների և Թիֆլիսի նկարչութեան, գեղարուեստի և քանդակագործութեան ուսումնարանին. նպաստի չափն է՝ 2000 ռուբլի։

◆ Պետական և զեմսկի հարկերի գանձումը այս տարի Թիֆլիսի նահանգում աւելի աջող է անցել, քան բոլոր նախորդ տարիները։ Դա մի կողմից այն պատճառով, որ վերջերս կեանքը մտել է կարծես իր նորմալ ընթացքում և գնալով լաւանում է, միւս կողմից շնորհիւ տեղական ադմինիստրացիայի և հարկային տեսուչների համերաշխ գործունէութեանը։ Հետաքրքրական մի փաստ էլ պիտի արձանագրել. նահանգիս մանաւոր հողատէրերին այս տարի գիւղացիները աւելի լաւ են վճարում իրանց հարկերը, մի երեոյթ, որ անսովոր է Ռուսաստանում. մանաւոր հողատէրերը—մեծ մասամբ ազնուականներ, միշտ հնար են ունեցել աւելի արտօնութիւններ «ձեռք բերել և հարկ վճարելու» գործում։

◆ Բագվում շուտով կը վերսկսվի «Հասարակական բժիշկ» թերթի հրատարակութիւնը։

◆ Բագուցիներին յայտնի բժիշկ Լևոն Աթաբէգեանը, որ ներկայումս պահվում է Նովոչերկասկի բանտում «Դաշնակցութիւն» կուսակցութեանը պատկանելու մէջ, ազատվում է 5 հազար ռուբլի գրաւականով։ Նովոչերկասկի բանտից ազատել են 10 հոգու։ Մօտիկ ապագայում ազատելու են դարձեալ 15 հոգու։ Այս օրերս վերջացաւ Նովոչերկասկի բանտում բանտարկվածների մեղադրական ակտի ընթերցումը։ Այս հսկայ գործին մասնակից անձանց կարծիքով դատավարութիւնը կը սկսվի 1911 թուի սեպտեմբերից ոչ շուտ։ («Баку»)

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՎԱՌՔ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

◆ Կիրակի, դեկտեմբերի 26-ին, վրաց դերասանական խումբը, ցերեկով խաղաց Շվայէրի «Վարքի թուանշան» 4 գործողութեամբ դրամա։ Նոյն օրը երեկոյեան խաղացվեց Բարբէտի «Նոր վարդապետութիւն» 5 գործ. պիէսը, որի մէջ Մարկի դերը կատարեց Լաղո Մեսխիշվիլին։

◆ Երկուշաբթի, դեկտեմբերի 27-ին, ցերեկով նոյն խումբը, մասնակցութեամբ Լաղո Մեսխիշվիլիի խաղաց Մօնտի «Կայի Գրակխ» 5 գործ. ողբերգութիւնը։

◆ Հինգշաբթի, դեկտեմբերի 30 ին, երիտասարդ դերասան Զարդալիշվիլիի բենեֆիսին կը խաղացվի «Ժառանգորդ պրինց» պիէսը։

◆ Առաջիկայ տարվայ յունվարի 2-ին, Թիֆլիսի Վրաց Դրամատիքական ընկերութեան գոյութեան 30-ամեակի լրացման օրը, Վրաց Թատրոնում տեղի կունենայ հանդիսաւոր յոբելեանական ներկայացումներ։

◆ Վաղը, չորեքշաբթի, ամսոյս 29-ին, վրաց «Գանաթլեբա» կրթական ընկ. օգտին, Թիֆլիսի ժողովարանում կը կազմակերպվի «Պատմական երեկոյթ», համապատասխան հանդէսներով։

◆ Թիֆլիս է ժամանել Եւրոպայի օպերային յայտնի երգիչ, ազգով վրացի Միխայիլ Նանօբաշվիլին, որը Եւրոպայում յայտնի է «Դարիալի» անունով։ Նա երգել է Պարիզում, Միլանում և Եւրոպայի այլ մեծ քաղաքներում։ Երգիչը մտադիր է Թիֆլիսում ևս մի քանի համերգներ կազմակերպել։

◆ Վրաց «Սախալխո Գազէթի» լրագիրը հաղորդում է, որ տաղանդաւոր դերասան Կ. Մեսխին իր յոբելեանի առիթով ի միջի այլ դրամական նուէրների, նաև նուէրներ է ստացել յայտնի բարեգործ Ալ. Մանթաշեանից 500 ռ., Վրաց Ազնուականութիւնից 300 ռ. և Վրաց Ազնուականութեան բանկից 100 ռուբլի։

◆ Դեկտեմբերի 20-ին, Ղվիրելյում վախճանվեց յայտնի գործիչ և կրօնական «Հովիւ» հանդէսի խմբագիր աւագ քահանայ Դաւիթ Ղամբաշիձէն, 70 տարեկան հասակում։ Հանգուցեալը 60-ական թուականների գործիչների շարքին էր պատկանում։ Նա վրացերէնի հետ միաժամանակ խմբագրում էր ռուսերէն լեզուով «Пастырь» կրօնական երկշաբաթաթերթը։

◆ Վրաց «Սախալխո Գազէթի» թերթի վերջին համարում պրոֆ. Ա. Խախանովը քննադատում է Մ. Ալանվերդեանի նորերս լոյս տեսած գիրքը, որը վերաբերում է ռուս գրող Գրիբոյեդովի աներ իշխան Ալ. Ճավճավաձէին։

◆ Վրացուհիների մի խմբի նախաձեռնութեամբ առաջիկայ տարվայ մարտին կը տօնվի վրաց կին գրող Եկատերինա Գաբաշվիլիի գրական գործունէութեան յոբելեանը, որի համար արդէն կազմված է 17 հոգուց բաղկացած մի մասնաժողով։

◆ Ինչպէս հաղորդում է «Սախալխո Գազէթի» օրաթերթը, արևելագէտ Արտուր Լայսթի մօտ է եղել երկու տարի սրանից առաջ Նովէգիացի մի պարոն, Բուսթավէլի ազգանունով։ Նա յայտնել է, որ ինքը կարդացել է Բուսթավէլիի յայտնի «Վէպ-խվիս տղա օտանի» (Ընձեռնաւորը) պօէման, որը լոյս տեսաւ գերմաներէն Արտուր Լայսթի թարգմանութեամբ։ Նօրվէգիացի ճանապարհորդը յայտնել է, որ առաջ ինքը իրան ծագումով իտալացի է եղել համարելիս, բայց վերոյիշեալ թարգմանութիւնը կարդալուց յետոյ տրամադիր է կարծելու, որ իրանց ազգը պէտք է որ Վրաստանից գաղթած լինի։

◆ Այլև այլ տեղերից դեռ ևս ստացվում են շնորհաւորական հեռագիրներ Կոստէ Մեսխիի յոբելեանի առիթով։

Գաւառական բեմերի վրա ևս կը կազմակերպվեն ներկայացումներ, որոնցից շատերին կը մասնակցէ ինքը յոբելեարը։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Մոսկվա, 18 դեկտեմբերի

Խնդրում եմ չը մերժէք զետեղելու ձեր թերթի մտակայ համարներից մէկում իմ այս երկտողը։

«Մշակի» № 275-ում (ս. տ.) նրա Մոսկվայի թղթակից Առ-Զէն խօսում է «Միքայէլ Նալբանդեան» անունը կրող բեֆեբարտիս մասին, որ կայացաւ տեղումս այս նոյեմբերի 23-ին, խօսում է և դժբաղդաբար աղաւաղում է նրանում արտայայտված մտքերը։

Ահա օրինակները։

Թղթակցի ասելով դուրս է գալիս, որ ըստ իս հայ վերածնիչները «կռիւ էին մղում հայ առևտրական-կապիտալիստների հետ ձեռք-ձեռքի տուած, ընդդէմ հայ աւատական-կղերականութեան»։ Այդօրինակ գռեհիկ միտք ես չեմ արծարծել։

Մ. Նալբանդեանի առաջադրած հողային հաւասարացումը չեմ համարել բէակցիոն մի գաղափար, ինչպէս այն թւում է թղթակցին։ Այդպիսի բացարձակ պնդում ես չեմ արել։

Նոյն հողային հաւասարացումը չեմ բնորոշել որպէս «ընդհանուր սեփականութեան ժխտումն, առանց մասնաւոր ժխտման» (?!)։ Ընդհակառակը, չակերտների մէջ բերվածը ես արտուրդ եմ համարում։

Եւ այլն և այլն։ Նման անճշտութիւններից է հիւսված ողջ թղթակցութիւնը։

Ալ. Մեսնիկեան

—

Թիֆլիս, 27 դեկտեմբեր

Վերջին ժամանակներում «Մշակի» միջոցով Գանձակի գաւառի հայ թուրքական ընդհարումներին ենթարկված և աւերակված Ղարաղալու գիւղի գիւղացիները իրանց կիսաւեր եկեղեցին ու դպրոցի շինութիւնը վերաշինելու համար դիմումներ էին արել, որը սակայն մինչև այժմ անարձագանք է մնացել...

Վերոյիշեալ գիւղի զաւակ, վերջի ծանրութիւնը, ցաւը աւելի քան ինձ վրա զգալով՝ եկեղեցու վերաշինութեան համար թէև ոյժերիցս վեր, նուիրում 10 ռուբլի, որովհետև ես անձամբ գիտեմ թէ որքան և որ աստիճան բարոյական և հոգեկան մխիթարութիւններից են զրկված աւերակների վրա նստած համագիւղացիները։

Կար. Ղազարեան

—

Ասխաբադ, 12 դեկտեմբերի

Ցայտնում ենք ի միամտութիւն Ասխաբադի մի խումբ յարգելի երիտասարդների, որ Վաղամեռիկ ընկերոջ՝ Սարգիս Ղազարեանի դագաղի վրա պակ դնելու փոխարէն հաւաքված 18 ռ. 23 կ. ուղարկված է Ուսուցչական Միութեան՝ 1911 թուից հրատարակվելիք «Նոր-Դպրոց» շաբաթաթերթից առաջիկայ տարում մի քանի օրինակ ուղարկելու զանազան տեղերի չքաւոր դպրոցներին, որոնց թւում նաև 1 օրինակ՝ տեղիս ծխական դպրոցին։

Աւագ ուսուցիչ՝ Գ. Հայկունի

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Ց. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմված 1880 թ.
(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԻ
«606»-Ի ՆԵՐՍՐՍԿՈՒՄՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԵԱՄԲ՝ 11—12 ժ.
Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴՆԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հ.։
Կ. Մ. ԶԻԿՕՎԱՆԻ—9½—11 ժ. աչքի, ներքին և նեարդային։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։
Ն. Տ. ՄՈՒՂԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ., վիրաբուժութեան և միզասեռ. հ.
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Պ. Ս. ԶԻԼԲԵՐՇԱՑ—12½—1½ ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.։
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հիւ.։
Բ. Գ. ԱՂԱՍԱՐԵԱՆ—1½—2 ժ. ներքին և երեխայոց հ.
ԵՐԵԿՈՆԵՐԸ
ԿԻՆ ԲԺԻՇԿ Պ. Ս. ԶԻԼԲԵՐՇԱՑ—6—6½ ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.։
Ի. Ֆ. ՄԱՐՑԻՇԵՎՍԿԻ—6—7 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։
Գնաբը 50 կ.։ Հրաւերները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան
103. 0—140

ԲԺԻՇԿ
Վ. ԱՐԾՐՈՒՆԻ
Ականջի, քթի, բերանի, կոկորդի
հիւանդութիւններ,
Ընդունելութիւն (Առաւօտեան 9—1 ժամը.
(Երեկոյեան 5—7 ժամը.
Վելիամինովսկայա փ. № 13, տ. Սէյլանովի, 3-րդ գիմնազիայի կողքին։
(օ. մ.) 1227. 100—28

ԲԺԻՇԿ
Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ
ՆԵՐՔԻՆ ԵՒ ԵՐԵԽԱՅՈՑ
ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
առանձնապէս ՍՏԱՄՈՔԻՍ և ԱՂԻՔՆԵՐԻ
հիւանդութիւններ։
Ընդունելութիւն ամեն օր { 10—11 ժ. առ. (երեխաների)
5—7 ժ. երեկ. (ընդհանուր)
Միքայէլեան փող., № 36. Տէլէֆոն № 388.
(Ե.Հ.Կ.) 909. 100—60

ԲԺՇԿԱԳԵՏ
Ա. ՔԱԹԱՆԵԱՆ
ՆԵՐՔԻՆ, և ՋԱՆՑԻՆ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունել. ամեն օր { Առաւօտ. ժ. 9—12
Երեկոյ. ժ. 5—7
(Ե.Հ.Կ.) 1254. 100—19

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Լոյս տեսաւ
Մ. ՉՄՇԿԵԱՆԻ
1911 թ. „ՍԵՂԱՆԻ" ՏԱՐԵՑՈՅՑԸ
«ԾՈՑԻ» և Армянскій Календарь съ предсказаніемъ օրացոյցները,
որը վաճառվում է Կովկասի քաղաքների յայտնի գրավաճառանոցներում և Թղթեղէնի խանութներում։ Մեծ քանակութեամբ գնողները դիմում են հետևեալ հասցէով. Тифлисъ. Габаевская № 5, Макару Чимишкяну. Մակար Ձմշկեանց։
(Կ. Ե.) 1300. 10—10

Սամարղանդի
հայ գաղութի համար
◆ ՀԱՐԿԱՒՈՐ Է ◆
ժիջնակարգ կրթութեամբ և ռուսաց լեզուին տիրապետող
◆⊕ ՄԵՏՆԱՋԵՆԱՒՈՐ ՔԱՀԱՆԱՅ ⊕◆
Դիմել՝ Самаркандъ, В. Айвазянцу. Торговый Домъ „Таронъ".
(Հ. Կ. Ե.) 1415. 8—3

ԿՕՍՏԻՒՄ ԵՒ ԿՈՒՐՏԿԱ 5 Ռ.50 Կ.
Ուանց բիսկի։ Ուղ. ենք պօստով, վերադիր վճ.։ ԵԹԷ չը հաւանվի՝ փողը վերադարձնում ենք։ 1) 4¼ արշ. բրդէ տրիկօ 2 արշ. լայն., ամուր և էլեգանտ գործուածք, տաք, ամբողջ կոստիումացու. 2) երկ-բօրտ պատրաստի սաեին-գործ կուրտկա՝ ձմեռվայ ժամանակ իւրաքանչիւրին անհրաժեշտ, ցոյց տրված չափսի։ Մի զոյգի համար ճանապարհածախք հաշվում է 55 կօպ.։ Հասցէագրել՝ Г. ЛОДЗЬ. ЛЬВУ РУБАШКИНУ. 257.
(Ե.) (В.89306) 1285. 10—6



Գրական-արուեստագիտական-երաժշտական
Պատկերազարդ հանդէս
ԹԻՖԼԻՍՈՒՄ
Խմբագրութեամբ ԴԱՐԵԳԻՆ ԼԵՒՈՆԵԱՆԻ
10 գիրքը 10 ռ., ճանապարհածախսով 12 ռ., հատով 2 ռ.
—o—
1911 թուականի ընթացքում լոյս կը տեսնեն ՉՈՒՍ ստուար գրքեր, (փետրվար, մայիս, օգոստոս, նոյեմբեր) որոնց համար
5 ռ. ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐԱՒԹԻՒՆ 5 ռ.
Լոյս տեսած Ա. Բ. և Գ. գրքերի հետ միասին՝ 8 ռ.
Խմբագրութեան հասցէն՝ Մօլօլակ, Գուղովիչա փող. № 7.
Օտար տեղերից դիմել՝ Тифлисъ, редакція „Гехарвестъ"
—◆—
Մանօր. Խնդրվում է այն անձերին, որոնց մօտ խմբագրութեանս հասանելի գումարներ կան, կամ որոնք չեն լրացրել իրանց բաժանորդավճարը՝ շտապեն ուղարկել։ Մեր այս բազմածախս գործի յարատևութիւնը սպասում է հայ գեղեցիկ գրականութիւնը և արուեստը սիրողների աջակցութիւնը՝ հանդէսը տարածելով աւելի լայն շրջաններում։
Խմբագրութիւն
1403. 3—3

ՍԱՐԱՏՕՎԵԱՆ ՍԱՐՊԻՆԿԱՆԵՐԻ և ԳՈՒԼՊԱՆԵՐԻ (սարպինկային մանուածքից) ՖԱԲՐԻԿԱՆԵՐԻ ԱՌԵՒՏՐԻ ԵՒ ԱՐԴԻՒՆԱԲԵՐ. ՄԻՆԻՍՏՐՈՒԹԵԱՆ ԻՐԱՒԱՅՈՒԹԵԱՆ ՆԵՐՔՈՒՆ ԿՏՆՎՈՂ

ՀԱՇԻԱՊԱՀՈՒԹԵԱՆ ԿՈՒՐՍԵՐ
ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԲՐԱՀԱՄԵԱՆԻ

Հեղինակ «Առևտրական, գործարանական և նաւթարդիւնաբերութեան հաշուապահութեան ձեռնարկի», որ ֆինանսների մինիստրութեան ուսումնարանական բաժնի կողմից ընդունված է իբրև օժանդակ ձեռնարկ առևտրական դպրոցներում և նրանց գրադարաններում։

ՍՈՎՈՐԵՑՆՈՒՄ ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՆ
ԵՐԿՈՒ ՍԵՌԻ անձանց գործնական ձեւով հաշուապահութիւն և ուրիշ մասնագիտարկներ 4 ամսվայ ընթացքում։
Կուրսերում այլ սովորական մասնագիտական առարկաներից ուսուցվում են յունվար ամսից ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐ և տպագրութիւն (стенографія) ըստ ցանկութեան և որոշ վճարով։
Ընդունելութիւնն ամեն օր, ժամը 4-ից մինչև 7-ը երեկոյեան, 9-ից մինչև 10-ը առաւօտեան։ Պարապմունքները սկսվում են 1911 թ. ՅՈՒՆՎԱՐԻ 15-ից պարբերաբար ամեն 4 ամիս, ամենայն օր ճաշից յետոյ։ Ծրագիրը ուղարկվում է ձրի։
Դասընթացքն ուսուցանվում են, ֆինանսների մինիստրութեան թոյլատրած ծրագրի համաձայն, ստուգատեսներ։
Գրանից անկախ բացված են քիչ պատրաստականութիւն ունեցող անձերի համար առանձին լրացուցիչ կրկնողութեան կուրսեր ռուսաց լեզուի և թուաբանութեան համար։
Ցանկացողներին խնդրում ենք դիմել գրաւոր կերպով կամ անձամբ կուրսերի հիմնադրին Թիֆլիսում. Н. В. Абрамяну, Николаевская ул. № 22, Հեռաձայն № 744.
Վերևում լիշված ձեռնարկը ծախվում է Ռուսաստանի բոլոր գրավաճառանոցներում։ Օտարաքաղաքացիները գիրքը գնելու համար կարող են դիմել հեղինակին, առանց պօստի ծախս վճարելու։ Գինն է 3 ռ. 50 կ.
(Կ.Ե.Հ.) 1385. 0—6



ՀԻՊՆՕՏԻԶՄ
ԴՈՒՔ ԿԱՐՈՂ ԷՔ ՀԻՊՆՕԶԱՑՆԵԼ,
Հիպնօտիզմը բնական ձիրք չէ։ Ամեն ոք կարող է տիրապետել այս խորհրդաւոր գիտութեան։

Հիպնօտիզմ սովորելը նոյնքան հեշտ է, որքան ուսել խմելը։
Հիպնօտիզմը կը բժշկէ հիւանդութիւններ և կուղղէ մոլորութիւններն ու վատ բաները։
Հիպնօզական յուցահանդէսները շափազանց զուարճալի են։
Սովորեցէք հիպնօզացնելու արուեստը։ Մշակեցէք ձեր մէջ ներշնչելու զօրութիւնը և այդ զանազանի ոյժի միջնորդութեամբ դարմանեցէք հիւանդութիւններ, տուէք ապշեցուցիչ յուցահանդէսներ թատրոններում կամ մասնաւոր սրահներում և դառէք պրոֆէսիոնալ հիպնօտիստ։
Սովորելու ծախքը շատ չնչին է։
Ստացէք իմ «Ինչպէս հիպնօսացնել» պատկերազարդ գրքոյկը, որը կը տայ ձեզ լիապատիր բացատրութիւն հիպնօտիզմի, մեսմերիզմի, հոգեբուժութեան, ներշնչման, հոգեսեսութեան և Տելեպաթիի մասին։ Այս գրքոյկն ստանալու համար պիտի ուղարկել 10 կօպէկի նամակագրական ճանապարհածախքի համար։
ԳՐԵՑԷՔ ԱՅՍՕՐ։ Գրեցէք ձեր անունն ու հասցէն որոշ։
Դիմել հետևեալ հասցէով՝ Америка. Haroutun Shekerjian. 3758 Indiana Ave. Chicago, Ill. U. S. A. (Հ.Հ.) 689. 100—59

ОТКРЫТА ПОДПИСКА НА 1911 Г.
На еженедѣльную общественно-педагогическую газету
ШКОЛА и ЖИЗНЬ
Съ ежемѣсячными приложеніями.

Въ книжкахъ приложеній, которыя за годъ составятъ около 80 печатныхъ листовъ, будутъ помѣщаться цѣльныя произведенія русскихъ и иностранныхъ авторовъ, старыя классическія, или выдающіяся новѣйшія, или касающіяся наиболѣе интересныхъ вопросовъ текущаго времени. Три книжки приложеній будутъ посвящены памяти Л. Н. Толстого, Н. И. Пирогова и работамъ извѣстнаго нѣмецкаго педагога Кершенштейнера. Въ числѣ приложеній—три сборника, спеціально посвященные нашей низшей, средней и высшей школѣ.

Газета издается по слѣдующей программѣ: 1) Руководящія статьи по вопросамъ: а) организаціи школы и школьнаго законодательства, б) общепедагогической теоріи и практики. 2) Статьи по различнымъ вопросамъ образованія и воспитанія. 3) Фельетонъ характеризующій по преимуществу внутреннюю жизнь школы или популяризующій различныя стороны знанія. 4) Обзоръ печати. 5) Хроника образованія: дѣятельность законодательныхъ учрежденій, правительства, мѣстнаго самоуправленія и т. д. 6) Хроника школьной жизни въ Россіи и заграницей. 7) Обозрѣніе спеціальной литературы русской и иностранной. 8) Справочный отдѣлъ съ подотдѣломъ отвѣтовъ редакціи на запросы подписчиковъ.

Редакція газеты имѣетъ корреспондентовъ въ разныхъ городахъ Имперіи и спеціальныхъ корреспондентовъ въ Г. Совѣтѣ и Г. Думѣ.

Подъ общей редакціей Г. А. Фальборка.

ПОДПИСНАЯ ЦѢНА:	на годъ	на 6 м.	на 3 м.
Съ доставкой и пересылкой въ города Имперіи:	6 руб.	3 руб.	2 руб.

Для учащихъ въ начальныхъ училищахъ допускается разсрочка по 1 р. за каждые 2 мѣсяца.

Газета выходитъ съ ноября мѣсяца. Пробные №№ высылаются безплатно.

Подписка принимается: въ Главной Конторѣ, Петербургъ, Кабинетская, № 18, тел. 547—34, во всѣхъ почтово-телеграфныхъ конторахъ Россіи и въ книжныхъ магазинахъ.

Объявленія принимаются въ Главной Конторѣ газеты. Цѣна объявленій за строку нонпарели на первой страницѣ 60 коп., позади текста 30 коп.

3—3 Издатели: Н. В. Мѣшковъ и Г. А. Фальборкъ.

ԴԵՂԱՀԱՏՆԵՐ
CASCARA MIDY
Ֆրանսիական ժողովրդական միջոց
ՍՈՎՈՐԱԿԱՆ ՓՈՐԿԱՊՈՒԹԵԱՆ դէմ։
Ընդունելութեան չափը. 2 ԴԵՂԱՀԱՏ ԵՐԵԿՈՆԵՐԸ. ՊԱՌԿԵԼՈՒԾ ՈՐԱՉ։
Cascara Midy-ն (Կասկարա Միդի) չէ առաջացնում որովայնի մէջ ցաւեր, ոչ էլ հոց և փորլուծութիւն։ Դեղավաճառանոց MIDY, 140, faubourg St. Honoré. Парижъ. Ռուսաստանի Գլխաւոր դեղավաճառանոցներում։
(8, 18, 28) (М. 305088) 1050. 0—34

Типографія „ЭКОНОМІЯ", Большая-Ванкская № 2.